Սիրելի Շառլ Ազնավուր,

Առաջին նամակը ձեզ գրել եմ 1987-ին. համերգ ունեիք Նյու Յորքի *Radio City Music Hall*-ում, և առաջին անգամ ձեզ տեսնելու էի բեմում: Համերգից առաջ, մեծ հուզմունքով, ձեզ մի նամակ գրեցի՝ հույսով, որ կհանդիպեմ ձեզ ու նամակը կհանձնեմ: Ելույթից հետո, երբ դուրս էիք գալիս համերգասրահից, քայլելով ձեզ սպասող հոծ ամբոխի միջով դեպի մեքենան, համարձակություն ունեցա ձեզ ձայն տալու: Եվ, օ՛ հրաշք, դուք մոտեցաք ինձ: Ձեռքիս նամակը տվեցի ձեզ, և դուք ասացիք՝ «Եթե հայերեն է, չեմ կղնաղ կաղդալ»: «Ոչ, ֆրանսերեն է», պատասխանեցի, և դուք նամակը դրեցիք ձեր գրպանը: Հաջորդ օրը մի ընկերոջ, որը ձեզ հանդիպելու էր, խնդրեցի հետաքրքրվել նամակիս ճակատագրով: Ձեր պատասխանը եղել էր՝ «Ես այնքա՛ն նամակներ կստանամ, ո՞ր մեկը կարդամ»:

Միևնույն է, իմ այդ առաջին չկարդացված նամակը ճակատագրական էր. այսօր ահա ձեզ գրում եմ իմ չորրորդ նամակը՝ ասելու, որ ստեղծել եմ իմ *Ազնավուր հայերեն* շարքի երրորդ երգապնակը՝ *Ազնավուր 100*-ը: Առաջինն *Ազնավուր 85*-ն էր՝ 2009-ին, հետո եղավ *Ազնավուր 95*-ը՝ 2019-ին և ահա վերջինը՝ *Ազնավուր 100*-ը, որը նախորդների նման նվիրված է ձեր ծննդյան տարելիցներին, այս անգամ՝ 100-րդ՝ հոբելյանական:

2009 թվականին, երբ հրատարակեցի իմ առաջին ալբոմը, որն ընդգրկում էր ձեր գլուխգործոցները՝ ամենահայտնի երգերը՝ թվով 13-ը՝ *Մեր Բոհեմը, Մաման, Տարեք ինձ այնտեղ, Երբ սիրում ես ինձ, Դեռ երեկ, Ասում են, Տեսնում էի արդեն* և այլն, ձեր երգերի հայերեն երգեցիկ թարգմանություններ չկային, և, փաստորեն, հայ ունկնդիրը առաջին անգամ հնարավորություն ունեցավ դրանք լսելու իր մայրենի լեզվով: Ինձ համար մեծ պատիվ էր, որ ձեր երգը, որ ֆրանսերենին առընթեր թարգմանաբար վաղուց հնչում էր բազմաթիվ լեզուներով, իմ թարգմանությամբ հնչեց նաև հայերենով, և հայ ունկնդիրը կարող էր հասկանալ ձեր երգերի իմաստն ու գեղեցկությունը, զգալ ձեր թեմաների բազմազանությունը, ազատությունը, շունչը: Դրանք սկսեցին հնչել Հայաստանում՝ ռադիոյով և հեռուստատեսությամբ, տեսահոլովակներով, ձեզ նվիրված հանդիսություններին, համերգներին, մարդկանց տանը:

Երկրորդ ալբոմը՝ *Ազնավուր 95*-ը լույս ընծայեցի 2019-ին, երբ դուք արդեն մեզ հետ չէիք, ու հասկացել էի, որ դեռ պարտք ունեմ հայ ունկնդրին՝ մի քիչ ավելի բացահայտելու նրա համար ձեր արվեստի անսահման ու հետաքրքիր աշխարհը: Այդ ալբոմի համար ընտրել էի ևս 13+1 երգ՝ ձեր շատ հայտնի և հանրաճանոթ՝ *Նրանք ընկան, Ինչ տխուր է Վենետիկը, Շնորհավոր մեր տարեդարձը, Բոլոր դեմքերն ևս դու սիրո* երգերը և մի սքանչելի ընտրանի այսօրվա ունկնդրին ոչ շատ ծանոթ ձեր հին երգերից: Այս երգերն էլ հասան ունկնդրին, սիրվեցին և տարածվեցին, նպաստեցին ձեր արվեստի ճանաչմանն ու հանրայնացմանը:

Ազնավուր 100 ալբոմը ներառում է 25 երգ: Կան երգեր, որոնք ժամանակին սկսել եմ թարգմանել, մանավանդ ձեր վաղ շրջանի «գոհարներից», բայց գրեթե անթարգմանելի են թվացել. բայց, վերջիվերջո, հաջողել եմ գտնել բանալին, դրանց տալ ձև ու մարմին: Ձեր իսկ կազմած 500 երգերի ժողովածուն պատրաստելիս, դուք ❤ սրտիկով նշել եք այն երգերը, որոնք շատ եք սիրում: Ուրախ եմ, որ այս ալբոմի երգերից տասը ձեր «սրտիկած» երգերից են, որոնք նույնպես հայացան և ուղեկցելու են այն մարդկանց, որոնց համար ձեր արվեստը կարևոր է ու թանկ:

Հայաստանում շատերն են ապրում ձեր երգերով, այս թարգմանությունների շնորհիվ հասկանում են, թե ինչ եք պատմում ձեր երգերում: Եվ ոչ միայն Հայաստանում. աշխարհով մեկ ցրված հայ ժողովուրդը շարունակում է պահանջ ունենալ լսելու ձեզ, ձեր երգերով իմաստավորելու իր օրը, իր կյանքը: Այդ պահանջի ապացույցն են նաև այն համերգները, որ ունենում եմ աշխարհի տարբեր անկյուններում, ուր դեռ գոյատևում են հայ համայնքները՝ շնորհիվ հայ լեզվի ու արվեստի, որի կարևորագույն մասն եք դուք կազմում՝ մանավանդ ձեր «հայերեն» երգերով:

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր այն երգիչներին ու երգչուհիներին, որոնք միանում են ինձ և յուրաքանչյուր համերգ վերածում տոնի: Ի տարբերություն նախորդների, այս երգապնակում ինձ են միանում երգչուհիներ Նաիրի Գասպարյանը ու Ալվարդ Մայիլյանը, ովքեր ձեր երգերին նոր երանգ են բերում:

Իմ շնորհակալությունն եմ հայտնում կնոջս՝ Անահիտին, ով անխոնջ խստապահությամբ խմբագրում է թարգմանություններս, և հատկապես ընկերոջս՝ տաղանդաշատ երաժիշտ Տիգրան Նանյանին՝ համագործակցության և սքանչելի երաժշտական ձևավո-

րումների համար, որոնց շնորհիվ, ինչպես դուք կասեիք՝ «միանում են իրար հնչյունը և բառը»:

Եվ վերջապես՝ իմ խոնարհումն այն ունկնդրին, որի շնորհիվ ու համար շարունակում եմ վառ պահել ձեր երգը: Վստահ եմ, որ հայերեն հնչող ձեր երգերը կշարունակեն ապրել՝ իբրև կամուրջ մեր սրտերի ու ձեր հավերժական երգի միջև: Երջանիկ եմ, որ այդ կամուրջի հիմքում արդեն 50-ից ավելի քար եմ դրել:

Անհուն երախտագիտությամբ
ու սիրով՝

Պետեր Թյուրաբյան
Նյու Յորք, 2024



Cher Charles Aznavour,

Je vous ai écrit ma première lettre en 1987. Vous donniez alors un concert au Radio City Music Hall de New York et j'allais vous voir pour la première fois sur scène. Avant le concert, très ému, je vous avais écrit une lettre dans l'espoir de vous rencontrer et de vous la remettre. Après le concert, lorsque vous sortiez de la salle, traversant la foule qui vous attendait pour rejoindre votre voiture, j'ai osé vous appeler. Et, ô miracle, vous êtes venu vers moi. Je vous ai tendu ma lettre et vous m'avez dit : « Si c'est en arménien, je ne pourrai pas la lire. » - « Non, c'est en français, » ai-je répondu. Vous avez alors glissé la lettre dans votre poche. Le lendemain, j'ai demandé à un ami qui devait vous voir de s'informer du sort de ma lettre. Votre réponse avait été : « Je reçois tant de lettres ! Laquelle pourrais-je lire ? »

Qu'importe : cette première lettre non lue fut décisive : aujourd'hui, je vous adresse ma quatrième lettre pour vous annoncer que j'ai réalisé le troisième album de ma série « Aznavour en arménien » : Aznavour 100. Le premier fut Aznavour 85, paru en 2009, puis vint Aznavour 95 en 2019. Et voici le dernier, Aznavour 100, qui, comme les précédents, est dédié à l'un de vos anniversaires de naissance - cette fois au centième.

En 2009, lorsque j'ai publié mon premier album, qui réunissait vos chefs-d'œuvre, vos chansons les plus célèbres - 13 au total : La Bohème, La mamma, Emmenez-moi, Quand tu m'aimes, Hier encore, Comme ils disent, Je m'voyais déjà, etc. - il n'existait pas encore de traductions chantables en arménien de vos œuvres. Le public arménien eut alors, pour la première fois, l'occasion de les entendre dans sa langue maternelle. Ce fut pour moi un immense honneur que vos chansons, déjà traduites et interprétées dans tant de langues à travers le monde, résonnent aussi en arménien grâce à mes traductions. L'auditeur arménien pouvait ainsi en saisir le sens et la beauté, ressentir la diversité, la liberté et le souffle de vos thèmes. Elles commencèrent à être diffusées en Arménie : à la radio et à la télévision, en vidéoclips, lors de soirées qui vous étaient dédiées, jusque dans les foyers.

Le deuxième album, Aznavour 95, je l'ai publié en 2019, alors que vous n'étiez déjà plus parmi nous. J'avais compris qu'il me restait un devoir envers le public arménien : lui faire

découvrir plus encore l'univers infini et fascinant de votre art. Pour cet album, j'ai choisi 13 + 1 chansons, parmi vos titres les plus connus et aimés - Ils sont tombés, Que c'est triste Venise, Bon anniversaire, Tous les visages de l'amour - ainsi qu'une merveilleuse sélection de vos œuvres anciennes et familières à l'auditeur d'aujourd'hui. Ces chansons aussi ont touché le public, elles ont été aimées, diffusées et ont contribué à mieux faire connaître et apprécier votre art.

Aznavour 100 réunit 25 chansons. Certaines, que j'avais commencé à traduire il y a longtemps, parmi vos « perles » de jeunesse, m'avaient d'abord semblé presque intraduisibles. Mais j'ai fini par en trouver la clé, leur donner forme et corps. Dans le recueil de 500 chansons que vous aviez vous-même établi, vous aviez marqué d'un petit cœur ❤ celles que vous aimiez particulièrement. Je suis heureux que dix d'entre elles figurent dans cet album, désormais en arménien elles aussi, et qu'elles puissent accompagner celles et ceux pour qui votre art est précieux et cher.

En Arménie, beaucoup vivent au rythme de vos chansons, et se réjouissent de pouvoir, grâce à mes traductions, comprendre ce que vous racontez dans vos textes. Et pas seulement en Arménie : le peuple arménien, dispersé à travers le monde, continue de ressentir le besoin de vous écouter, de donner sens à son quotidien et à sa vie à travers vos chansons. Les concerts que je donne dans divers coins du monde, là où survivent encore des communautés arméniennes grâce à la langue et à l'art arménien, en sont la preuve. Et vous en êtes une part essentielle, surtout à travers vos chansons désormais chantées en arménien.

Je remercie tous les chanteurs et toutes les chanteuses qui se joignent à moi et font de chaque concert une fête. Contrairement aux précédents albums, celui-ci réunit à mes côtés les chanteuses Naïri Gasparyan et Alvard Mayilyan, qui apportent des nuances et une sensibilité nouvelles à vos chansons.

J'exprime ma gratitude à mon épouse, Anahit, qui révise inlassablement mes traductions avec rigueur, et tout particulièrement à mon ami, le talentueux musicien Tigran Nanian, pour sa précieuse collaboration et ses magnifiques arrangements, grâce auxquels - comme vous l'auriez dit – « le mot et la note s'unissent à vie. »

Et enfin, je m'incline devant l'auditeur arménophone, grâce à qui et pour qui je continue à garder vivante votre chanson. Je suis convaincu

que vos chansons en arménien continueront de vivre, comme un pont entre nos cœurs et votre chant éternel. Je suis heureux d'avoir déjà posé plus de 50 pierres à la fondation de ce pont.

Avec une reconnaissance
et un amour infinis,

Berge Turabian
New York, 2024





Dear Charles Aznavour,

I wrote my first letter to you in 1987. You had a concert at the Radio City Music Hall in New York, and I was going to see you on stage for the first time. Before the concert, I wrote you a letter, with great excitement, hoping I would meet you and hand it to you. After your performance, as you were leaving the concert hall and walking through the crowd waiting for you on your way to the car, I dared to call out to you. And - oh miracle - you came toward me. I gave you the letter, and you said, "If it is in Armenian, I won't be able to read it." "No, it's in French," I replied, and you put the letter in your pocket. The next day, I asked a friend who was going to meet you to inquire about the fate of my letter. Your answer had been: "I receive so many letters - which one could I read?"

Nevertheless, that first unread letter proved to be fateful. Today, here I am, writing you my fourth letter, to tell you that I have created the third album in my "Aznavour in Armenian" series: Aznavour 100. The first one was Aznavour 85 in 2009, then came Aznavour 95 in 2019, and now the latest - Aznavour 100, which, like the previous ones, is dedicated to the anniversaries of your birth - this time 100th.

In 2009, when I released my first album, which included 13 of your masterpieces - your most famous songs such as La Bohème, La Mamma, Take Me Along, When You Love Me, Yesterday When I Was Young, What Makes a Man a Man, It Will Be My Day, and others - there were no singable Armenian translations of your songs. For the first time, Armenian listeners had the chance to hear them in their mother tongue. It was a great honor for me that your songs, which had long been performed in many languages besides French, could also be heard in Armenian through my translations - allowing the Armenian audience to understand the meaning and beauty of your lyrics, to feel the richness of your themes, the sense of freedom, the breath of life within them. They began to be heard in Armenia - on radio and television, in music videos, at ceremonies and concerts dedicated to you, and in people's homes.

The second album, Aznavour 95, I released in 2019, when you were no longer with us. I felt that I still owed the Armenian audience more - to reveal to them a greater part of the infinite and fascinating world of your art. For that album I selected 13+1 songs, including some of your most famous and beloved ones – They Fell, How Sad Venice Can Be, Happy Anniversary,

She - along with a beautiful selection of your older songs, less familiar to today's audience. These songs, too, reached the listeners, and were loved and shared, and contributed to the further recognition and appreciation of your art.

The Aznavour 100 album includes 25 songs. Some of them I had begun to translate long ago - especially the ones from your early "jewels," which had seemed to be almost untranslatable. But, in the end, I managed to find the key, to give them form and body. In the anthology of 500 songs that you yourself compiled, you marked with a ❤ those songs that you especially loved. I am happy that ten of the songs in this album are among those you marked with a "heart" - songs that have now become Armenian and will accompany the people for whom your art is dear and precious.

In Armenia, many people live with your songs. Thanks to these translations, they understand what you are telling in your songs. And not only in Armenia - Armenians scattered all around the world still feel the need to hear you, to give meaning to their day and their lives through your songs. Proof of this need are the concerts I continue giving in various corners of the world, where Armenian communities still survive thanks to the Armenian language and the arts, of which you are an essential part - especially through the Armenian translations of your songs.

I thank all the singers who join me and turn each concert into a celebration. Unlike the previous albums, this one features Nairi Gasparyan and Alvard Mayilyan, whose voices bring new shades to your songs.

I extend my gratitude to my wife, Anahit, who tirelessly and rigorously edits my translations, and especially to my friend, talented musician Tigran Nanian, for his collaboration and magnificent arrangements, thanks to which, as you would say, "the note and the word are united for life."

And finally, my reverence goes to the listener, thanks to whom and for whom I continue to keep your song alive. I am confident that your songs in Armenian will continue to live on, as a bridge between our hearts and your eternal song. I am happy that I have already placed more than 50 "stones" at the foundation of that bridge.

With infinite gratitude and love,

Berge Turabian
New York, 2024



Charles Aznavour / Pierre Roche

Le Feutre taupé

Il portait un feutre taupé
Il parlait par onomatopées
Il buvait des cafés frappés
Avec des pailles

Il était très dégingandé
Il fumait des Camels parfumées
Il marchait à pas combinés
Boulevard Raspail

Il suivait des inconnues
Chaque soir le long des rues
Pour leur dire l'air ingénu
Doubi, doubi, doubi, douba

Il portait un feutre taupé
Il parlait par onomatopées
Il buvait des cafés frappés
Avec des pailles

Il était très imprudent
Car il risquait de se faire écraser tout l'temps
Il fuyait en s'excusant
Tandis que les gens disaient en s'éloignant

Il portait un feutre taupé
Il parlait par onomatopées
Il buvait des cafés frappés
Avec des pailles

Il était très dégingandé
Il fumait des Camels parfumées
Il marchait à pas combinés
Boulevard Raspail

Il suivait une inconnue
Lui parlait d'un air ému
En voici c'que j'ai r'tenu
Doubi, doubi, doubi, douba

Elle était très intéressée
Se laissa très très vite inviter
A prendre un bon café frappé
Avec des pailles

Elle lui plaisait fortement
Quand ell' parlait il n'osait plus faire un mouvement
Elle riait de son étonnement
Mais se laissa courtiser car justement ...

Հարդե գլխարկը

Իր գլխին կար հարդե գլխարկ
Իր լեզուն շատ էր տարօրինակ
Իր սուրճը խմում էր սառ թե տաք
Ձողիկով միայն

Իր շուրթին կար միշտ գլանակ
Իր բոյը երկար էր ու բարակ
Իր սիրած ճամփան էր միակ
Ռասպայ պողոտան

Հետևում էր նա կանանց
Փողոցով կեսգիշերն անց
Որ անկեղծ ասի նրանց
Doubi, doubi, doubi, douba

Իր գլխին կար հարդե գլխարկ
Իր լեզուն շատ էր տարօրինակ
Իր սուրճը խմում էր սառ թե տաք
Ձողիկով միայն

Անզգույշ էր փողոցն անցնում
Հազիվ էր վթարից անփորձանք պրծնում
Հետո գլուխն առնում փախնում
Իսկ մարդիկ ապշած ասում էին կրկնում

Իր գլխին կա հարդե գլխարկ
Իր լեզուն շատ է տարօրինակ
Իր սուրճը խմում է սառ թե տաք
Ձողիկով միայն

Իր շուրթին կա միշտ գլանակ
Իր բոյը երկար է ու բարակ
Իր սիրած ճամփան է միակ
Ռասպայ պողոտան

Հանդիպեց մի աղջկա
Ու ասաց ականջին նրա
ես այսքանը հասկացա
Doubi, doubi, doubi, douba

Նա լսեց մարդուն տարօրինակ
Ու գնաց իր տունը շատ արագ
Որ խմի իր սուրճը սառ թե տաք
Ձողիկով միայն

Այնքան սիրեց մարդն աղջկան
Որ անվերջ լսում էր հիացած նրան
Աղջիկն էլ հմայվեց այնքան
Որ այդ մարդու հետ կիսեց իր ապագան

Elle aimait son feutre taupé
Son parlé par onomatopées
Et aussi les cafés frappés
Avec des pailles

Elle était blonde platine
Elle était fortement parfumée
Et prenait un air détaché
Un air canaille

Quand il lui disait chérie
Vous êtes la femme de ma vie
En ajoutant ces mots gentils
Doubi, doubi, doubi, douba

Plus tard ils se sont mariés
Cela fit un ménage de cinglés
Qui s'balade à pas combinés
Boulevard Raspail

Il faut les voir dans un café
Sur le comptoir buvant frappés
Des cafés, des cafés frappés
Avec des pailles

1946

Մեկն ուներ մի հարդե գլխարկ
Մեկն ուներ լեզու տարօրինակ
Եվ սուրճը խմում էր սառ թե տաք
Ձողիկով միայն

Մյուսն ուներ մազեր դեղնաճերմակ
Մյուսն ուներ դեմքին փոշեդիմակ
Եվ իրեն պահում էր սանձարձակ
Իսկն անպիտան

Մարդն ասում էր օ իմ սեր
Ձեզ եմ ընտրել կյանքիս ընկեր
Հետո ասում քնքուշ բառեր
Doubi, doubi, doubi, douba

Իսկ հետո եղավ պսակ
Ու դարձան մի զույգ տարօրինակ
Նրանց սիրաճ ճամփան էր միակ
Ռասպայ պողոտան

Պետք է տեսնեք նրանց մենակ
Սրճարանում նստած շարունակ
Սուրճ խմելիս սուրճը սառ թե տաք
Ձողիկով միայն



Charles Aznavour

Au creux de mon épaule

Les nerfs à fleur de peau j'affronte nos problèmes
Les mots froids et tranchants ont lardé nos je t'aime
Et poignardé nos jours
Dans la plaie de nos coeurs s'est glissée la gangrène
L'amour défiguré nous conduit de la haine
Jusqu'à ce point de non-retour

Si je t'ai blessée
Si j'ai noirci ton passé
Viens pleurer au creux de mon épaule

Viens tout contre moi
Et si je fus maladroit
Je t'en prie, chérie pardonne-moi

Laisse ta pudeur
Du plus profond de ton cœur
Viens pleurer au creux de mon épaule

Oublie si tu peux
Nos querelles d'amoureux
Et chérie nous pourrons être heureux

Ô, mon amour
Ne m'enlève pas le souffle de ma vie
Ni mes joies pour
Ce qui ne fût qu'un instant de folie

Ne dis pas adieu
Nous serions trop malheureux
Viens pleurer au creux de mon épaule

Car si tu partais
Si mon bonheur se brisait
Mon amour c'est moi qui pleurerais

Ô, mon amour
Ne m'enlève pas le souffle de ma vie
Ni mes joies pour
Ce qui ne fût qu'un instant de folie

Ne dis pas adieu
Nous serions trop malheureux
Viens pleurer au creux de mon épaule

Car si tu partais
Si mon bonheur se brisait
Mon amour c'est moi qui pleurerais

1954

Եկ ուսիս թափիր քո արցունքները

Էլ չեմ տանում գիտես մեր անիմաստ վեճերը
Բառերն անգութ ու չար խոցում են մեր սրտերը
Եվ ըերում են մեզ մահ
Մեր հոգին վիրավոր սողոսկել է փտախտը
Ու դժոխք է դարձել մեր ջերմ սիրո դրախտը
Ու չկա կարծես ետդարձ հիմա

Թե սիրտդ եմ խոցել
Թե օրերդ եմ դառնացրել
Եկ ուսիս թափիր քո արցունքները

Եկ ինձ լուռ գրկիր
Սխալներս մոռացիր
Օ՛ իմ սեր խնդրում եմ ինձ ներիր

Թող քեն ու ամոթ
Սիրտդ բաց արի ինձ մոտ
Եկ ուսիս թափիր քո արցունքները

Ու չհիշենք էլ
Թե որքան ենք զուր վիճել
Դեռ կարող ենք երջանիկ լինել

Օ՛ դու իմ սեր
Մի խլիր ինձնից իմ խինդը և հույզերը
Մի սպանիր
Լոկ մի անմիտ սխալի համար իմ սերը

Մի թող մի գնա
Մեր կյանքը վիշտ չդառնա
Եկ ուսիս թափիր քո արցունքները

Թե քեզ չտեսնեմ
Երազներս կորցնեմ
Ախ իմ սեր օ՛ այնքան ես կտանջվեմ

Օ՛ դու իմ սեր
Մի խլիր ինձնից իմ խինդը և հույզերը
Մի սպանիր
Լոկ մի անմիտ սխալի համար իմ սերը

Մի թող մի գնա
Մեր կյանքը վիշտ չդառնա
Եկ ուսիս թափիր քո արցունքները

Թե քեզ չտեսնեմ
Երջանկությունս կորցնեմ
Ախ իմ սեր օ՛ ես էլ կարտասվեմ

Charles Aznavour

On ne sait jamais

On ne sait jamais
Comment l'amour vient aux amants
Comment il fait ou il s'y prend
Pour nous tenir dans ses filets
Mais tout à coup c'est merveilleux
Il y a des larmes plein nos joies
Des caresses au bout de nos doigts
Et des rêves au fond de nos yeux
On ne sait jamais
Mais pourquoi chercher à savoir ?
Nul n'a jamais eu ce pouvoir
On oublie tout quand l'amour naît
Plus rien ne peut nous retenir
Et fou d'amour et de désir
On se dit
Tant pis
Si l'on ne sait jamais

On ne sait jamais
Quand on est pris par le bonheur
Si c'est l'esprit ou bien le cœur
Qui nous apporte ce bienfait
On a confiance en l'avenir
C'est à la vie comme à la mort
Et tant pis si l'on a eu tort
On met ça dans les souvenirs
On ne sait jamais
Et l'on se fiche éperdument
Du qui du quoi et du comment
On est heureux comme l'on est
Plus rien ne compte à notre vue
Que ce bonheur à cœur perdu
Qui nous dit
Tans pis
Si l'on ne sait jamais

On ne sait jamais
L'amour fait de nous ce qu'il veut
On est heureux ou malheureux
Tout est parfait ou rien n'est vrai
Parfois il reprend d'une main
Ce que de l'autre il a donné
Mais quand tout semble s'écrouler
Lorsque l'on croit n'avoir plus rien
On ne sait jamais
Nos yeux sont à peine séchés
Qu'un autre amour vient s'annoncer
Et tout est à recommencer
On est fébrile et haletant
À chaque fois comme à vingt ans
Nous faisons toujours d'autres folies
Au cours de notre vie
Tout ça parc'qu'on ne sait jamais

1956

Չենք իմանա երբեք

Չենք իմանա երբեք
Սերն ինչպես է սրտեր որսում
Ինչ է անում ինչ է ասում
Որպեսզի ցանցը իր ընկնենք
Բայց կյանքն հանկարծ հրաշք է դառնում
Կա խինդ ու լաց մեր դեմքերին
Այնքան զգվանք մեր մատներին
Այնքան երազ մեր սրտերում
Չենք իմանա երբեք
Իսկ իմանալ պե՞տք է արդյոք
Չի իմացել երբեք ոչ ոք
Երբ սերը կա էլ ինչ է պետք
Ոչ մի արգելք մեր դեմ չկա
Ու միայն խենթ այդ կիրքը կա
Այո բայց
Ինչ արած
Թե չենք իմանա երբեք

Չենք իմանա երբեք
Թե ինչպե՞ս ենք երջանկացել
Թե այդ ինչն է մեզ ջերմացրել
Որ մեր սիրտն է երգում սիրերգ
Ու հավատում ենք մեր վաղվան
Հոգով մարմնով մտնում ենք կյանք
Եվ ինչ արած թե սխալ եղանք
Հուշ կդարձնենք և այս և այն

Չենք իմանա երբեք
Մնացյալը մեր հոգը չէ
Հարցեր չունենք ո՞վ է ինչ է
Երջանիկ ենք ինչպես որ ենք
Ավելի թանկ չկա ոչինչ
Սիրո բերկրանք է ամեն ինչ
Այո բայց
Ինչ արած
Թե չենք իմանա երբեք

Չենք իմանա երբեք
Սերն ինչ ասես կանի մեզ հետ
Երջանիկ կամ դժբախտ հավետ
Այսօր վատ է լավ էր երեկ
Հանկարծ փլվում է ամեն ինչ
Կյանքն ինչ տվել էր մի ձեռքով
Ետ է վերցնում մեզնից մյուսով
Պարզվում է էլ չունենք ոչինչ
Չենք իմանա երբեք
Երբ աչքներս դեռ կիսաթաց
Մի այլ սեր է ծնվում հանկարծ
Եվ սկսվում է մի նոր կրկներգ
Ու սիրտը մեր փխրուն այնքան
Նորից զգում է քսան տարեկան
Ու միշտ ու միշտ կանենք նույնը
Ու միևնույն խենթությունը
Քանի որ չենք իմանում երբեք

Sa jeunesse

Lorsque l'on tient
Entre ses mains
Cette richesse
Avoir vingt ans, des lendemains
Pleins de promesses
Quand l'amour sur nous se penche
Pour nous offrir ses nuits blanches
Lorsque l'on voit
Loin devant soi
Rire la vie
Brodée d'espoir, riche de joie
Et de folie
Il faut boire jusqu'à l'ivresse
Sa jeunesse

Car tous les instants
De nos vingt ans
Nous sont comptés
Et jamais plus
Le temps perdu
Ne nous fait face
Il passe
Souvent en vain
On tend les mains
Et l'on regrette
Il est trop tard sur son chemin
Rien ne l'arrête
On ne peut garder sans cesse
Sa jeunesse

Avant que de sourire nous quittons l'enfance
Avant que de savoir la jeunesse s'enfuit
Cela semble si court que l'on est tout surpris
Qu'avant que de comprendre, on quitte l'existence

1956

Ջահելությունը

Երբ կդառնաս
Քսան տարեկան
Եվ քո օրերը
Քեզ կընծայեն երջանկության
Բյուր խոստումները
Երբ կկանչի իր մոտ քեզ սերը
Կտա անքուն իր գիշերները
Երբ կտեսնես
Ճամփիդ անծայր
Ժպտում է կյանքը
Հույսերով լի, խենթ ու խելառ
Վերցրու բաժակը
Ու պարպիր այդ քաղցր թույնը
Ջահելությունը

Երբ ամեն վայրկյան
Կյանքի գարնան
Թանկ է այնքան
Ու չի շրջի
Ժամանակը իր
Անգութ ընթացքը
Իր վազքը

Ուշ է հետո ամեն զղջում
Եվ ափսոսանքը
Ջուր ենք կանչում զուր ենք տենչում
Անցած մեր կյանքը
Չի մնա հավերժ մեր գարունը
Ջահելությունը

Ժպիտը դեռ դեմքիդ կկորցնես մանկությունը
Չես իմանա ինչպես ջահելությունդ անցավ
Այնքան շուտ որ կզգաս միայն զարմանք ու ցավ
Չես հասկանա այդ երբ ավարտվեց այս
պատմությունը

L'Amour et la Guerre

Pourquoi donc irais-je encore à la guerre
Après ce que j'ai vu, avec ce que je sais ?
Où sont-ils à présent les héros de naguère ?
Ils sont allés trop loin chercher la vérité
Quel que soit le printemps les cigognes reviennent
Tant de fois le cœur gros je les ai vues passer
Elles berçaient pour moi des rêveries anciennes
Illusions d'un enfant dont il n'est rien resté

Toutes les fleurs sont mortes aux fusils de nos pères
Bleuets, coqu'licots d'un jardin dévasté
J'ai compris maintenant ce qu'il me reste à faire
Ne comptez pas sur moi si vous recommencez
Tout ce que l'on apprend dans le regard des femmes
Ni le feu, ni le fer n'y pourront jamais rien
Car l'amour et lui seul survit parmi ces flammes
Je ferai ce qu'il faut pour défendre le mien

Pourquoi donc irais-je offrir ma jeunesse
Alors que le bonheur est peut-être à deux pas ?
Je suis là pour t'aimer, je veux t'aimer sans cesse
Afin que le soleil se lève sur nos pas

1959

Սերը և Պատերազմը

Հանուն ինչի վերցնեմ ձեր զենքերը
երբ տեսել եմ գիտեմ պատերազմ ու արյուն
Ո՞ւր են ասեք հիմա երեկվա հերոսները
Որ գնացին հեռվում փնտրեն ճշմարտություն
Արագիլները միշտ տուն են եկել գարունը
Ինձ հաճախ են սփոփել երբ ճախրել են երկնում
Եվ օրորել ջերմիկ տխուր իմ մանկությունը
Երազներ որ ավաղ այսօր չեն սավառնում

Մեր հայրերի զենքից մոխրացան ծաղիկները
Վարդ շուշան ու կակաչ ավերված պարտեզում
Ես լավ գիտեմ արդեն որն է այսօր իմ դերը
Ինձ հետ հույս չկապեք թե կռվել եք ուզում
Այն ինչ տալիս է մեզ սիրող կնոջ հայացքը
Ոչ ոք ռազմի դաշտում չի կարող կործանել
Անզոր են սիրո դեմ անգամ զենքը ու կրակը
Ու ոչինչ չի կարող սերը իմ մեջ սպանել

Հանուն ինչի զոհեմ ջահել հասակս
Երբ իմ դուռն է թակում երջանկությունն այսօր
Ուզում եմ քեզ սիրել քեզ նվիրել ողջ կյանքս
Որ մեր ճամփին ծագի արևը ամեն օր

J'en déduis que je t'aime

Par la peur de te perdre et de ne plus te voir
Par ce monde insensé qui grouille dans ma tête
Par ces nuits sans sommeil où la folie me guette
Quand le doute m'effleure et tend mon cœur de noir
J'en déduis que je t'aime
J'en déduis que je t'aime

Par le temps que je prends pour ne penser qu'à toi
Par ces rêves de jour où tu règnes en idole
Par ton corps désiré de mon corps qui s'affole
Et l'angoisse à l'idée que tu te joues de moi
J'en déduis que je t'aime
J'en déduis que je t'aime

Par le froid qui m'étreint lorsque je t'aperçois
Par mon souffle coupé, et mon sang qui se glace
Par la désolation qui réduit mon espace
Et le mal que souvent tu me fais malgré toi
Par la contradiction de ma tête et mon cœur
Par mes vingt ans perdus qu'en toi je réalise
Par tes regards lointains qui parfois me suffisent
Et me font espérer en quelques jours meilleurs
J'en déduis que je t'aime
J'en déduis que je t'aime

Par l'idée que la fin pourrait être un début
Par mes joies éventrées par ton indifférence
Par tous les mots d'amour qui restent en souffrance
Puisque de te les dire est pour moi défendu
J'en déduis que je t'aime
J'en déduis mon amour

1959

Ուրեմն քեզ սիրում եմ

Թե իմ մեջ կա մի վախ քեզ կորցնելու ընդմիշտ
Թե հանգիստ չեն տալիս ինձ անհեթեթ մտքերը
Թե հոգիս են տանջում իմ անքուն գիշերները
Ու կասկածն է սրտիս բերում խավար ու վիշտ
Ուրեմն քեզ սիրում եմ
Ուրեմն քեզ սիրում եմ

Թե դու ես միմիայն իմ մեջ գիշեր ու լույս
Թե երազումս արթուն դու ես իմ տերն ու կուռքը
Թե խայտում է հոգիս լոկ տեսնելով քո շուքը
Ու տագնապում որ սերդ գուցե խաղ է անհույս
Ուրեմն քեզ սիրում եմ
Ուրեմն քեզ սիրում եմ

Թե քեզ նկատելիս մարմնովս անցնում է դող
Թե շունչս է կտրվում հոսում է սառ քրտինքը
Թե շուրջս ամայի է ծանր է անգամ երկինքր
Ու ցավ է պատճառում պահվածքդ շփոթող

Թե անհաշտ են անվերջ իմ միտքն ու իմ հոգին
Թե քեզնով եմ ուզում լցնել կորցրած իմ կյանքը
Թե տեսնում եմ թեկուզ հեռվից ես քո հայացքը
Ու լցվում եմ հույսով ու ժպտում եմ կյանքին
Ուրեմն քեզ սիրում եմ
Ուրեմն քեզ սիրում եմ

Թե հավատում եմ որ վերջը սկիզբ կդառնա
Թե խինդս է մարում երբ դու ինձ անտեսում ես
Թե բառերս սիրո որ ասել արգելում ես
Լուռ այրում են հոգիս խորը վերքի նման
Ուրեմն քեզ սիրում եմ
Ուրեմն... ո՛ իմ սեր

Parce que

Parc'que t'as les yeux bleus
Que tes cheveux s'amusent à défier le soleil
Par leur éclat de feu
Parc'que tu as vingt ans
Que tu croques à la vie comme en un fruit vermeil
Que l'on cueille en riant
Tu te crois tout permis et n'en fait qu'à ta tête
Désolée un instant prête à recommencer
Tu joues avec mon cœur comme un enfant gâté
Qui réclame un joujou pour le réduire en miettes
Parc'que j'ai trop d'amour
Tu viens voler mes nuits du fond de mon sommeil
Et fais pleurer mes jours

Mais prends garde chérie je ne réponds de rien
Si ma raison s'égare et si je perds patience
Je peux d'un trait rayer nos cœurs d'une existence
Dont tu es le seul but et l'unique lien

Parc'que je n'ai que toi
Mon cœur est mon seul maître et maître de mon cœur
L'amour nous fait la loi
Parc'que tu vis en moi
Et que rien ne remplace les instants de bonheur
Que je prends dans tes bras
Je ne me soucierai ni de Dieu ni des hommes
Je suis prêt à mourir si tu mourais un jour
Car la mort n'est qu'un jeu comparée à l'amour
Et la vie n'est plus rien sans l'amour qu'elle nous donne
Parc'que je suis au seuil
D'un amour éternel je voudrais que mon cœur
N'en portât pas le deuil

Parce que
Parce que...

1959

Երբ

Երբ աչքերդ են կապույտ
Երբ մազերդ են խարտյաշ ու կարծում ես
քո դեմ
Նույնիսկ արևն է մութ
Երբ դեռ քսան էլ չկաս
Ու քեզ կյանքն է թվում մրգերով լի եղեմ
Որ քաղես ինչ ցանկաս
Եվ անես ինչ ուզես ամեն խելքիդ փչածը
Ինչպես մի կամակոր երես առած մանկիկ
Ու խաղաս սրտիս հետ քեզ դարձրած
խաղալիք
Որ փշրես ժպտալով ինչպես ափիդ մեջ հացը
Երբ իմ սերն է անհուն
Ինձ կթողնես անհույս ինձ կդարձնես անդեմ
Գիշերներս անքուն

Բայց զգույշ, օ իմ սեր, թե մնամ անպաշտպան
Ես կարող է դրժեմ սիրո ամեն երդում
Մի հարվածով ջնջեմ քո սիրտը իմ սրտում
Իմ կյանքի մեն-միակ նպատակն ու ձամփան

Երբ ունեմ քեզ միայն
Երբ քո սերն է ինձ տեր ու տերը իմ սրտի
Օրենքն իմ գոյության
Երբ ապրում ես իմ մեջ
Երջանիկ եմ միայն համբույրով քո շրթի
Երբ գրկումդ եմ անվերջ
Հոգս չեն ոչ Աստված ոչ էլ մարդիկ իմ շուրջը
Կմեռնեմ թե գնաս չի պահի ինձ ոչ ոք
Քանզի սիրո կողքին մահը խաղ է մի լոկ
Եվ ապրելն է իզուր երբ չկա սիրո շունչը
Երբ իմ սերն է անմահ
Ինչպես սգամ իմ սեր ես մահը իմ սրտի
Որ փշրում ես հիմա

Երբ...
Իմ սեր....

Yves Stéphane / Charles Aznavour

L'amour c'est comme un jour

Le soleil brille à pleins feux
Mais je ne vois que tes yeux
La blancheur de ton corps nu
Devant mes mains éperdues
Viens, ne laisse pas s'enfuir
Les matins brodés d'amour
Viens, ne laisse pas mourir
Les printemps, nos plaisirs

L'amour c'est comme un jour
Ça s'en va, ça s'en va l'amour
C'est comme un jour de soleil en ripaille
Et de lune en chamaille
Et de pluie en bataille
L'amour c'est comme un jour
Ça s'en va, ça s'en va l'amour

C'est comme un jour d'un infini sourire
Une infinie tendresse
Une infinie caresse
L'amour c'est comme un jour
Ça s'en va mon amour

Notre été s'en est allé
Et tes yeux m'ont oublié
Te souviens-tu de ces jours
Où nos coeurs parlaient d'amour ?
Nous n'avons pu retenir
Que des lambeaux de bonheur
S'il n'y a plus d'avenir
Il nous reste un souvenir

L'amour c'est comme un jour
Ça s'en va, ça s'en va l'amour
C'est comme un jour de soleil en ripaille
Et de lune en chamaille
Et de pluie en bataille
L'amour c'est comme un jour
Ça s'en va, ça s'en va l'amour

C'est comme un jour d'un infini sourire
Une infinie tendresse
Une infinie caresse
L'amour c'est comme un jour
Ça s'en va mon amour

1962

Սերն ինչպես օր

Տես արևն է վառ կիզում
Բայց աչքիդ լույսն եմ ուզում
Ու շողքը քո մերկ մարմնի
Իմ գրկում թող չմթնի
Եկ, մի թող որ հուշ դառնան
Ոսկեհյուս այգերը մեր
Եկ, մի թող որ չքանան
Խինդը մեր գարունը մեր

Սերը... սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր
Սերն ինչպես օր ուր շողում է արևը
Ուր հորդում է անձրևը
Ուր թափվում է տերևը
Սերը սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր

Սերն ինչպես օր ուր երգում է բերկրանքը
Ուր զեղում է քնքշանքը
Ուր անվերջ է շոյանքը
Սերը սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր

Մեր ամռան օրերն անցան
Ու աչքերդ ինձ մոռացան
Դու հիշիր պահերը մեր
երբ մեր մեջ կար այնքան սեր
Այդ ամենից մեզ մնաց
Լոկ մի քանի էջ թոշնած
Ու թե սերն արդեն չկա
Գեթ սիրո մեր հուշը կա

Սերը սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր
Սերն ինչպես օր ուր շողում է արևը
Ուր հորդում է անձրևը
Ուր թափվում է տերևը
Սերը սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր

Սերն ինչպես օր ուր երգում է բերկրանքը
Ուր զեղում է քնքշանքը
Ուր անվերջ է է շոյանքը
Սերը սերն ինչպես օր
Կգնա կանցնի մի օր

Les Comédiens

Viens voir les comédiens
Voir les musiciens
Voir les magiciens
Qui arrivent

Les comédiens ont installé leurs tréteaux
Ils ont dressé leur estrade et tendu des calicots
Les comédiens ont parcouru les faubourgs
Ils ont donné la parade à grand renfort de tambour

Devant l'église une roulotte peinte en vert
Avec les chaises d'un théâtre à ciel ouvert
Et derrière eux comme un cortège en folie
Ils drainent tout le pays... les comédiens

Viens voir les comédiens
Voir les musiciens
Voir les magiciens
Qui arrivent

Si vous voulez voir confondus les coquins
Dans une histoire un peu triste où tout
s'arrange à la fin
Si vous aimez voir trembler les amoureux
Vous lamenter sur Baptiste ou rire avec les heureux

Poussez la toile et entrez donc vous installer
Sous les étoiles le rideau va se lever
Quand les trois coups retentiront dans la nuit
Ils vont renaître à la vie... les comédiens

Viens voir les comédiens
Voir les musiciens
Voir les magiciens
Qui arrivent

Les comédiens ont démonté leurs tréteaux
Ils ont ôté leur estrade et plié les calicots
Ils laisseront au fond du cœur de chacun
Un peu de la serenade et du bonheur d'Arlequin

Demain matin quand le soleil va se lever
Ils seront loin et nous croirons avoir rêvé
Mais pour l'instant ils traversent dans la nuit
D'autres villages endormis... les comédiens

Viens voir les comédiens
Voir les musiciens
Voir les magiciens
Qui arrivent

1962

Դերասանները

Եկ տես դերասաններ
Տես երաժիշտներ
Տես աճպարարներ
Որ գալիս են

Դերասանները բեմն են իրենց մեխել
Վարագույրները կախել պաստառներ շարել
պես-պես
Նրանք շրջել են դռներով ու թաղերով
Շքերթել թմբուկներով հավաքել հանդիսատես

Եկեղեցու դիմաց ահա կանաչ մի կառք
Աթոռակներ շարված բաց երկնքի տակ
Իսկ խելագար ամբոխը հերթ է կանգնել
Դերասանները գյուղն են ողջ ոտքի հանել

Եկ տես դերասաններ
Տես երաժիշտներ
Տես աճպարարներ
Որ գալիս են

Դուք այդ բեմում կտեսնեք խաբեբաներ
Ու մռայլ պատմություններ բայց զվարթ մի
վերջաբան
Դուք կտեսնեք սիրահարներ միայնակ
Կտխրեք կուրախանաք երբ վերջում կմիանան

Առաջացեք մտեք-նստեք արագ հիմա
Վարագույրն աստղերի տակ կբարձրանա
Երբ կլսեք դուք բեմից երեք հարված
Դերասանները կծնվեն հենց ձեր դիմաց

Եկ տես դերասաններ
Տես երաժիշտներ
Տես աճպարարներ
Որ գալիս են

Դերասանները արդեն բեմն են քանդել
Պաստառները փաթաթել աթոռներն են
հավաքում
Նրանք թողել են խեղկատակի ծիծաղ
Ու երգեր տխուր-ուրախ յուրաքանչյուրի հոգում

Վաղն առավոտ երբ որ արևը կծագի
Կգնան այլ շրջանները քաղաքի
Որ այլ մարդկանց էլ արթնացնեն տան երազներ
Դերասանները միշտ կապրեն երազում մեր

Եկ տես դերասաններ
Տես երաժիշտներ
Տես աճպարարներ
Որ գալիս են

Qui?

Qui frôlera tes lèvres
Et vibrant de fièvre
Surprenant ton corps
Deviendra ton maître
En y faisant naître
Un nouveau bien-être
Un autre bonheur ?

Qui prendra la relève
Pour combler tes rêves
Et sans un remord
D'un éclat de rire
Saura te conduire
À mieux me détruire
Au fond de ton coeur ?

Qui peut être cet autre
Qui sera cet intrus
Dans tout ce qui fut nôtre
Quand je ne serais plus ?

Qui prendra ta faiblesse
Avec des caresses
Et des mots d'amour
En couvrant d'oubli
Nos jours de folies ?
Qui prendra ta vie
Au bout de mes jours ?

Nous vivons à vingt ans d'écart
Notre amour et démesuré
Et j'ai le coeur au désespoir
Pour ces années

Car lorsque mes yeux seront clos
D'autres yeux vont te contempler
Aussi je lutte avec ce mot
De ma pensée

Qui sans que tu protestes
Refera les gestes
Qui ne sont qu'à nous
Lorsque je t'embrasse
Lorsque je t'enlace ?
Qui prendra ma place
Autour de ton cou ?

Qui connaîtra tes scènes
De folie soudaine
Ou bien de courroux ?
Qui aura la chance
D'avoir ta présence ?
Souvent quand j'y pense
Je deviens jaloux

Qui ? Nul ne peut le dire
Qui ? Nous n'en savons rien
Et mon coeur se déchire
En pensant que quelqu'un

Te prendra d'un je t'aime
Et par ce je t'aime
Je le sais déjà
Il prendra ta bouche
Il prendra ta couche
Et m'enterrera
Pour la seconde fois

1964

Ո՞վ

Ո՞վ կքաղի համբույրդ
Եվ արբերցնող բույրդ
Կտիրի մարմնիդ
Կդառնա քո տերը
Քեզ կտա իր սերը
Ու կրքոտ գիշերը
Նոր երջանկության

Ո՞վ կխաղա իմ դերը
Կզգա քո իղձերը
Քեզ կտա նոր խինդ
Ո՞վ այդ որ անխիղճը
Դարձած իմ դահիճը
Կլսի քո ճիչը
Սիրո ցնծության

Ո՞վ որ անկոչ օտարը
Ո՞վ ոտքն իր կդնի
Մեր՝ իմ ու քո աշխարհը
Երբ ես էլ չեմ լինի

Ո՞վ կկորզի քնքշանքդ
Կարթնացի տենչանքդ
Խոսքերով սիրո
Կջնջի անունս
Խենթ երջանկությունս
Քո սրտում անկյունս
Ո՞վ ինձնից հետո

Ջահել ես քան տարով ինձնից
Սիրում ենք խենթի պես իրար
Բայց իմ սրտում կա խոր կսկիծ
Վաղվա համար

Երբ կփակեմ աչքերս մի օր
Քեզ այլ աչքեր կուզեն նորից
Ամվերջ այս միտքը թունավոր
Տանջում է ինձ

Ո՞վ քեզ կառնի իր գիրկը
Քեզ կտա իր կիրքը
Ինձնից առավել
Այն ամեն գգվանքը
Այն ամեն շոյանքը
Այն սիրո տարփանքը
Որ ես եմ տվել

Ո՞վ կտանի խաղերդ
Ու խենթ քմայքներդ
Լի լաց ու խինդով
Ո՞ր մեկ բախտավորը
Կկիսի քո օրը
Սիրտս այս բոլորը
Լցնում է խանդով

Ո՞վ չգիտեմ անունը
Ո՞վ չեմ էլ իմանա
Տես կորցրել եմ իմ քունը
Արդեն գիտեմ որ նա

Քեզ կասի սիրում եմ
Լոկ մի բառ սիրում եմ
Ու միանգամից
Կխլի մարմինդ
Սիրո անկողինդ
Եվ սիրտդ ինձնից
Ու կմեռնեմ նորից

Et moi dans mon coin

Lui il t'observe
Du coin de l'œil
Toi tu t'énerves
Dans ton fauteuil
Lui te caresse
Du fond des yeux
Toi tu te laisses
Prendre à son jeu

Et moi dans mon coin
Si je ne dis rien
Je remarque toutes choses
Et moi dans mon coin
Je ronge mon frein
En voyant venir la fin

Lui il te couve
Fiévreusement
Toi tu l'approuves
En souriant
Lui il te guette
Et je le vois
Toi tu regrettes
Que je sois là

Et moi dans mon coin
Si je ne dis rien
Je vois bien votre manège
Et moi dans mon coin
Je cache avec soin
Cette angoisse qui m'étreint

Lui te regarde
Furtivement
Toi tu bavardes
Trop librement
Lui te courtise
À travers moi
Toi tu te grises
Ris aux éclats

Et moi dans mon coin
Si je ne dis rien
J'ai le cœur au bord des larmes
Et moi dans mon coin
Je bois mon chagrin
Car l'amour change de main

1966

Իսկ ես իմ անկյունում

Նա նա նայում է քեզ
Հրապուրված
Դու դու լարվում ես
Կողքիս նստած
Նա նա շոյում է քեզ
Իր հայացքով
Դու դու տարվում ես
Այդ նոր խաղով

Իսկ ես իմ անկյունում
Ծպտուն չեմ հանում
Բայց նկատում եմ ձեր այդ խաղը
Իսկ ես իմ անկյունում
Ինձ հազիվ եմ պահում
Ու խաղի վերջը կռահում

Նա նա դյութում է քեզ
Մոլեգնորեն
Դու հուսադրում ես
Ժպտում իրեն
Նա նա տենչում է քեզ
Տեսնում եմ ես
Դու ափսոսում ես
Որ հետս ես

Իսկ ես իմ անկյունում
Ծպտուն չեմ հանում
Բայց տեսնում ձեր սիրախաղը
Իսկ ես իմ անկյունում
Իմ ցավն եմ թաքցնում
Որ իմ սիրտն է լուռ սեղմում

Նա նա կանչում է քեզ
Գաղտագողի
Դու ծիծաղում ես
Շատ անտեղի
Նա նա զգվում է քեզ
Իր աչքերով
Դու դու արբել ես
Մի նոր սիրով

Իսկ ես իմ անկյունում
Ծպտուն չեմ հանում
Ու թաքցնում իմ արցունքները
Իսկ ես իմ անկյունում
Իմ վիշտն եմ խմում
Սերը ձեռքից ձեռք է անցնում

Charles Aznavour

Pour essayer de faire une chanson

Comme un policier enquêtant pour un crime
Qui fouille l'indice en suivant sa pensée,
Je cherche le souffle et je guette la rime
Je cerne la phrase et questionne l'idée

Je traque le mot, construis la métrique
Et passe à tabac mon inspiration
Puis mets les menottes à la phonétique
Pour essayer de faire une chanson

Comme un souteneur qui joue sur sa chance
En frappant l'accord, j'effraie mon piano
Et fais leur affaire aux réminiscences
Et claque la note et bats le tempo

Pour faire chanter une mélodie
Je place un point d'orgue et change le ton
Puis, je fais main basse enfin sur l'harmonie
Pour essayer de faire une chanson

Comme un procureur tenace et implacable
J'attaque à huis-clos cette œuvrette de rien
Et puis, avocat qui plaide non coupable,
Je joue sur les mots en m'aidant du refrain

Je mets tout mon art dans ma plaidoirie
Et quand, libres enfin tous deux, ils s'en vont,
Le mot et la note s'unissent à vie
Pour essayer de faire une chanson

1966

Ահա այսպես եմ ես փորձում գրել մի երգ

Ինչպես մի ոստիկան որ քննում է հանցանքը
Խուզարկում է վայրերն ու հավաքում փաստեր
Որսում եմ ներշնչանքը հետո բռնում եմ հանգը
Միտքս եմ պրպտում ու գրառում նոթեր

Ես բառն եմ ընտրում որոշում եմ չափը
Եվ ձերբակալում մուսային իմ մերկ
Հետո հագցնում եմ ձեռքին ձեռնակապը
Ահա այսպես եմ ես փորձում գրել մի երգ

Ինչպես բախտը իր փորձող դատապաշտպանը
Իմ դաշնամուրի ստեղներն եմ շոյում
Որպեսզի հիշեմ երգիս նախաբանը
Ես ինչյունների տեղն եմ որոշում

Որ ես ինարեմ իմ երգի նվագը
Լաղն եմ որոշում հորինում կրկներգ
Հետո վերջապես ծնվում է եղանակը
Ահա այսպես եմ ես փորձում գրել մի երգ

Ինչպես անողոք ու համառ դատավորը
Գրոտաձ երգս եմ դռնփակ քննում
Ինչպես փաստաբանն ու գործով մեղավորը
Բառերով խաղում և իմ տողն եմ գտնում

Արվեստով անում իմ պաշտպանի ճառը
Եվ երբ չի մնա էլ շղթայված ձեռք
Կմիանան իրար ինչյունը և բառը
Ահա այսպես եմ ես փորձում գրել մի երգ

Charles Aznavour

Les enfants de la guerre

Les enfants de la guerre
Ne sont pas des enfants
Ils ont l'âge de pierre
Du fer et du sang
Sur les larmes de mères
Ils ont ouvert les yeux
Par des jours sans mystère
Et sur un monde en feu

Les enfants de la guerre
Ne sont pas des enfants
Ils ont connu la terre
À feu et à sang
Ils ont eu des chimères
Pour aiguiser leur dents
Et pris des cimetières
Pour des jardins d'enfants

Ces enfants de l'orage
Et des jours incertains
Qui avaient le visage
Creusé par la faim
Ont vieilli avant l'âge
Et grandi sans secours
Sans toucher l'héritage
Que doit léguer l'amour

Les enfants de la guerre
Ne sont pas des enfants
Ils ont vu la colère
Étouffer leurs chants
Ont appris à se taire
Et à serrer les poings
Quand les voix mensongères
Leur dictaient leur destin

Les enfants de la guerre
Ne sont pas des enfants
Avec leur mine fière
Et leurs yeux trop grand
Ils ont vu la misère
Recouvrir leurs élans
Et des mains étrangères
Égorger leurs printemps

Ces enfants sans enfance
Sans jeunesse et sans joie
Qui tremblaient sans défense
De peur et de froid
Qui défiaient la souffrance
Et taisaient leurs émois
Mais vivaient d'espérance
Sont comme toi et moi

Des amants de misère
De malheureux amants
Aux amours singulières
Aux rêves changeants
Qui cherchent la lumière
Mais la craignent pourtant
Car les amants de la guerre
Sont restés des enfants

1966

Պատերազմի մանուկները

Պատերազմի մանուկները
Մանկություն չեն ունեցել
Նրանց ապրած տարիները
Արյամբ են լցվել
երբ բացել են իրենց աչքը
Տեսել լացն իրենց մոր
Տառապանքն ու զրկանքը
եղել են ամեն օր

Պատերազմի մանուկները
Մանկություն չեն ունեցել
Նրանց անցած ճամփաները
Մոխրով են ծածկվել
Ու քնել են գիշերները
Առաց երգ օրորոց
Նրանց տեսած այգիները
եղել են գերեզմանոց

Այդ մանկանց վաղվա օրը
Միշտ սոված միշտ անորոշ
Հայացքում իրենց խորը
Ապագան էր գորշ

Դեռ չապրած մանկությունը
Ծերացել են վաղուց
Չեն շինել իրենց բույնը
Մերժվել են սիրուց

Պատերազմի մանուկները
Մանկություն չեն ունեցել
Ու նրանց բոլոր երգերը
Միշտ լուռ են մնացել
Պինդ սեղմել են իրենց շուրթը
Ու բռունցքները անծայն
Երբ լսել են միշտ այն սուտը
Թե լավ օրեր կգան

Պատերազմի մանուկները
Մանկություն չեն ունեցել
Ու նրանց հպարտ դեմքերը
Ահով են ծածկվել
Շալակել են կյանքի բեռը
Եվ փորձել ծիծաղել
Բայց թշնամու ձեռքերը
Նրանց զարունն են թաղել

Այդ մանկանց մանկությունը
Չի տեսել երգ ու խաղ
Ու ապրել են միայն աշունը
Զգացել ցուրտ ու վախ
Թաքցրել են ցավն ու հույզը
Անվերջ խաբված մարդու
Բայց պահել են միշտ հույսը
Ինչպես ես ինչպես դու

Այդ անսեր սիրահարները
Սիրահարներն այդ դժբախտ
Որոնց սերն ու երազները
Մնացին անավարտ
Դեռ փնտրում են իրենց սերը
Սրտում դառը արցունք
Պատերազմի սիրահարները
Մնացին միշտ մանուկ

Les Bons moments

Nous avons eu de bons moments
Nous avons eu de grands moments
De folles joies d'étranges peines
À vivre ensemble

Nous étions gorgés de printemps
Et fiers d'étaler nos vingt ans
Que les feux de l'amour
Et le désir rassemblent

Un jour riche, un jour sans un sou
Nous étions heureux malgré tout
Car jour et nuit brûlait en nous
Cet amour fou qui nous ressemble

Bien sûr, le bonheur est mouvant
Mais il laisse au cœur des amants
Les bons moments

Nous avons eu de bons moments
Nous avons eu de grands moments
Des crépuscules clairs
Des aubes grises ensemble

Nous étions jeunes et insouciants
Et vivions comme des enfants
Que les jours de la vie
Et les rêves rassemblent

Mais aujourd'hui mon triste cœur
Laisse ta peine oublie ta peur
Car bien que notre amour se meure
Sèche tes pleurs car il me semble

Qu'il vaut mieux dire en se quittant
Nous avons eu pour quelque temps
De bons moments, de bons moments

1967

Քաղցր պահեր

Մենք ապրեցինք չքնաղ պահեր
Մենք ապրեցինք անգին պահեր
Տեսանք թե խինդ թե ցավ ու վիշտ
Մենք միասին

Ճաշակեցինք վառ գարուններ
Ջահելության խենթ վայելքներ
Երբ կիրքն ու սերն էր միշտ
Այրում մեր երկուսին

Մի օր հարուստ մի օր սոված
Մենք ապրեցինք միշտ հմայված
Գիշերուզօր սիրով վառված
Մոռանալով վաղվա մասին

Թեև հավերժ չեն խինդ ու սեր
Բայց տես սրտում թողել են մեր
Քաղցր պահեր

Մենք ապրեցինք չքնաղ պահեր
Մենք ապրեցինք անգին պահեր
Վերջալոյսներ պայծառ
Արշալոյսներ գորշ միասին

Մենք դեռ ջահել էինք անհոգ
Մանուկների պես երազկոտ
Կյանքը ժպտում էր վառ
Գրկում մեր երկուսին

Եվ դու այսօր մի վիատվիր
Սիրտ իմ անհույս դու մի տխրիր
Թող լաց ու վիշտ ու մի ցավիր
Մեր վախճանվող սիրո մասին

Բաժանվելիս կասենք որ մեր
Կյանքում եղան չքնաղ պահեր
Քաղցր պահեր քաղցր պահեր

Le Cabotin

Je suis un cabotin dans toute sa splendeur
Je suis né pour jouer
Donnez-moi un tréteau minable et sans chaleur
Je vais me surpasser
Je suis un cabotin dans toute sa splendeur
Mais j'ai ça dans le sang
Donnez-moi quatre planches et quelques spectateurs
Et j'aurais du talent
Du talent

Dans une pièce de trois murs
À ventre ouvert sur le public
Tout comme au bord d'un gouffre obscur
Avec mon trac, avec mes tics
Je viens donner la comédie
Vibrant d'un feu qui brûle en moi
Je parle, je pleure et je ris
Et vis mon rôle chaque fois
Ne me condamnez pas sans comprendre mon cœur
Je suis d'une autre race
Je suis un cabotin dans toute sa splendeur
La scène est mon espace

Դերասան եմ շրջիկ

Դերասան եմ շրջիկ իր ամբողջ հմայքով
Ծնվել եմ որ խաղամ
Ինձ տվեք մի հարթակ թեկուզ անշուք տեսքով
Եվ ես ինձ ցույց կտամ
Դերասան եմ շրջիկ իր ամբողջ հմայքով
Ու կոչումն է դա իմ
Ինձ տվեք մի դահլիճ լոկ մի քանի հոգով
Տեսեք տաղանդը իմ
Տաղանդը իմ

Դատարկ մի բեմ ու երեք պատ
Հանդիսատեսն իմ դեմ նստած
Կարծես ընկած մի մութ թակարդ
Եվ իմ սրտում վախ ու կասկած
Ես իմ դերն եմ այստեղ խաղում
Հոգիս վառված ու արնաքամ
Խոսում լալիս եմ ծիծաղում
Մեռնում ծնվում ամեն անգամ
Ինձ ներեք եթե ես ձեզ խորթ եմ իմ հոգով
Այլ է իմ արյունը
Դերասան եմ շրջիկ իր ամբողջ հմայքով
Բեմն է միակ իմ տունը

Ma vie commence alors
Que je vois le décor
Que j'entends les trois coups
Et je suis malgré moi
Pris de peur et de joie
Quand le rideau se lève
Là, mon cœur bat si fort
Que je frôle la mort
Et que j'en oublie tout
Mais au moment exact
Je fais le premier pas
Pour entrer dans mon rêve
Mon rêve

Je suis un cabotin dans toute sa splendeur
J'ai choisi mon destin
Donnez-moi dix répliques et quelques projecteurs
Vous verrez mes moyens
Je suis un cabotin dans toute sa splendeur
Et c'est toute ma vie
Donnez-moi un théâtre, un rôle à ma hauteur
Et j'aurai du genie
Du génie

Sous un maquillage savant
Où le visage à découvert
Emphatique ou discrètement
Je dis la prose ou bien le vers
Avec tendresse avec fureur
Selon la pièce et puis l'emploi
Je souffre, je vis ou je meurs
Et mens jusqu'à ce que j'y croie
Soit dit sans vanité je connais ma valeur
Et si pour vous peut-être
Je suis un cabotin dans toute sa splendeur
Je reste fier de l'être

1968

ես շնչում եմ երբ իմ դեմ
Կա դահլիճ ու կա բեմ
Հնչում է երեք հարվածՙ
եվ ես անկախ ինձնից
Հրձվում սոսկում եմ նորից
Վարագույրը երբ բացվում է
Սիրտս բախում է ուժգին
Կարծես մեռնում եմ կրկին
Մոռանում դերս սերտածՙ
Բայց ճիշտ այդ նույն պահին
Բեմ եմ վազում և իմ
երազը սկսվում է
Սկսվում է

Դերասան եմ շրջիկ իր ամբողջ հմայքով
եվ դա է իմ ուղին
Ինձ տվեք մի թատրոն մի բեմ լուսարձակով
Հետևեք իմ խաղին
Դերասան եմ շրջիկ իր ամբողջ հմայքով
եվ աշխարհին է դա իմ
Ինձ տվեք լոկ խոսքեր և մի դեր իմ հագով
Տեսեք հանճարը իմ
Հանճարը իմ

Հագած դիմակ կամ շպարվածՙ
Մարդու դեմքով կամ Աստուծո
Խաղում եմ զուսպ կամ վերամբարձ
Դերս արձակ կամ չափածո
Մերթ մոլեգին ու մերթ քնքուշ
Իմ կերպարն եմ անվերջ կերտում
Դառնում հզոր դառնում անուժ
Խաբում ինքս ինձ ու հավատում
ես գիտեմ ով եմ ես իմ արյամբ ու ձիրքով
Ձեզ համար թե մի բան չեմ
Դերասան եմ շրջիկ իմ ամբողջ հմայքով
եվ ինձանով հպարտ եմ

Tout s'en va

Tout s'en va, tout se meurt
Tu ne crois plus à notre bonheur
Et tu deviens sans raison ni cause
Nerveuse et morose, Rose, Rose

Rose, Rose, ah oui! Je me souviens
J'avais quoi, dix-sept ans, toi peux être un peu moins
Quand tu séchais les cours et venais le matin
Pour m'apporter ton coeur comme un bouton de rose
Rose, Rose, amour de mon passé
Quand tu venais me voir dans ma chambre au grenier
Je trouvais que ta peau sentait le foin mouillé
Et quand je t'embrassais... mais ça c'est autre chose

Tout s'en va, tout se meurt
Tu veux fermer ta porte à mon coeur
J'entends déjà le vent qui se lève
Pour chasser mes rêves, Ève, Ève

Ève, Ève encore un souvenir
Qui m'a brûlé le coeur avant que de faiblir
J'ai cru devenir fou, j'ai voulu en mourir
Mais le temps guérit tout, un jour sans crier gare
Ève, Ève à mordre follement
Kate, Kate à l'accent que j'aimais
Dans le fruit de l'amour, on se brise les dents
Si tu m'as fait du mal j'ai conservé pourtant
Le souvenir des jours... je crois que je m'égare

Tout s'en va, tout se meurt
Je sens qu'en moi s'installe la peur
Tu as déjà bouclé ta valise
Et je réalise, Lise, Lise

Lise, Lise où es-tu aujourd'hui ?
Toi qui mourais le jour pour renaître la nuit
Toi qui marchais pieds nus en rêvant sous a pluie
Abhorrant le soleil mais adorant la neige
Lise, Lise et tes cheveux mouvants
Fantasque, inattendue, mi-femme et mi-enfant
Qui tombais dans mes bras parfois en sanglotant
Ou en riant très fort... voyons ou en étais-je ?

Tout s'en va, tout ce meurt
Je ne suis plus qu'une ombre en ton coeur
Et je vois bien qu'en toi tout s'apprête
Pour d'autres conquêtes... Kate, Kate

Ու կանցնի կգնա

Ու կանցնի կգնա
Երջանկությունը մեր չի մնա
Էլ չեմ լինի իր սրտի հերոսը
Օ անգութ այդ գոռոզը... Ոռզը, Ոռզը

Ոռզը, Ոռզը ամեն օր առավոտ
Փախչում էր դպրոցից ու գալիս էր ինձ մոտ
Տասնվեց տարեկան իսկ ես էլ տասնյոթ
Բերում իր սիրտը ինձ ինչպես վարդերի փունջը
Ոռզը, Ոռզը իմ սերն անցած կյանքում
Գալիս էր իմ սենյակ ծեղնահարկի խորքում
Ու թաց դեզին պառկած իրար էինք գրկում
Երբեմն համբուրվում... Ախ, ոնր է այդ անուրջը

Ու կանցնի կգնա
Իր սրտի դռռն էլ ինձ չի բանա
Ու կտեղա շուտով հորդ անձրևը
Կմթնի արևը... Էվը, Էվը

Էվը, Էվը կրկին սիրո մի հուշ
Որ իմ հոգին այրեց ու ինձ թողեց անուժ
Դարձրեց ինձ խելագար սիրով իր մահագույժ
Օրերի հետ սակայն կանցնեն և այդ ցավերը
Էվը, Էվը տվեց միրգն արգելված
Որ խժռեցի անկուշտ ու կոկորդս մնաց

Այդ ցավը մինչ այսօր դեռ իմ սրտում պահած
Վիշում եմ նրան անվերջ ... Բայց ոնր են այդ օրերը

Ու կանցնի կգնա
Վախենում եմ նա էլ չքանա
Արդեն հեռվում է մեր մեղրամիսը
Սիրո մեր ամիսը... Լիզը, Լիզը

Լիզը, Լիզը, ասես որտեղ է նա
Ցերեկը միշտ քնած բայց լույսն իմ գիշերվա
Որ թափառում էր մերկ ձմռանը ձյան վրա
Խորշում էր արևից պաշտում էր նա ձմեռը
Լիզը, Լիզը իր վարսերով անգին
Անզուսպ ու քմահաճ կես-աղջնակ կես-կին
Իմ գիրկն էր նա նետվում երբեմն լալագին
Երբեմն էլ խնդրուն... Խառնվել են իմ մտքերը

Ու կանցնի կգնա
Սերս սրտում իր ստվեր կդառնա
Կլրանա սիրո մեր ժամկետը
Կդնի վերջակետը... Քեյթը, Քեյթը

Քեյթը, Քեյթը իր հնչումով օտար
Անգլերեն շեշտերով որքան էլ նա ջանար
Կփչացներ ավաղ ամեն ֆրանսերեն բառ

Qui malgré ses efforts lorsqu'elle s'exprimait
Ne pouvait s'empêcher d'écorcher le français
Qui bien qu'étant anglaise était pourtant d'argile
Kate, Kate avait mille trésors
Et des taches de rouille agrémentaient son corps
Comme si ses parents l'avait laissée dehors
Trop longtemps sous la pluie ... le bonheur est fragile

Tout s'en va, tout se meurt
Mais le printemps reviens vainqueur
Laes bras chargés de rêves et de fleurs
Et sèche nos pleurs
Et sème en nos coeurs
Ses grains de folie
Ainsi va la vie

1968

Թեև մի անգլուհի պակաս չէր իր կրակը
Քեյթը, Քեյթը մի գանձ էր իր տեղով
Մարմինը ծածկված ոսկե պեպեններով
Կարծես արևի տակ պառկել էր օրերով
Որ ինձ այրի-գերի ... Դաժան է ժամանակը

Ու կանցնի կգնա
Էլի գարունը ետ կդառնա
Ծաղիկներով ցնորքներով լի
Որ մեզ հմայի
Սրտում մեր վառի
Մեր նոր երազանքը
Ու կանցնի այս կյանքը
Ու կանցնի կգնա



Charles Aznavour / Georges Garvarentz

Désormais

Désormais
On ne nous verra plus ensemble
Désormais
Mon cœur vivra sous les décombres
De ce monde qui nous ressemble
Et que le temps a dévasté

Désormais
Ma voix ne dira plus je t'aime
Désormais
Moi qui voulais être ton ombre
Je serai l'ombre de moi-même
Ma main de ta main séparée

Jamais plus
Nous ne mordrons au même fruit
Ne dormirons au même lit
Ne referons les mêmes gestes
Jamais plus
Ne connaîtrons la même peur
De voir s'enfuir notre bonheur
Et du reste
Désormais

Désormais
Les gens nous verrons l'un sans l'autre
Désormais
Nous changerons nos habitudes
Et ces mots que je croyais nôtres
Tu les diras dans d'autres bras

Désormais
Je garderai ma porte close
Désormais
Enfermé dans ma solitude
Je traînerai parmi les choses
Qui parleront toujours de toi

Jamais plus
Nous ne mordrons au même fruit
Ne dormirons au même lit
Ne referons les mêmes gestes
Jamais plus
Ne connaîtrons la même peur
De voir s'enfuir notre bonheur
Et du reste
Désormais

1969

Այսուհետ

Այսուհետ
էլ միասին մեզ չի տեսնի ոչ մեկը
Այսուհետ
Իմ տունը կդառնան ավերակները
Այս աշխարհի կորցրած իր ղեկը
Որ նմանվել է մեր սիրուն

Այսուհետ
Շուրթս քեզ չի երգի իմ սերը
Այսուհետ
ես որ դարձել էի քո ստվերը
Կդառնամ իմ սեփական ստվերը
Քեզնից բաժան ու անանուն

Էլ երբեք
Չենք քաղի մենք միրգն արգելված
Դրախտից ընդմիշտ վտարված
Ու մեր միջև ունայնություն է
Էլ երբեք
Մենք իրար գրկած չենք դողա
Երջանիկ մեր սիրո վրա
Էլ միևնույն է
Այսուհետ

Այսուհետ
Մենակ կանցնենք մեր ճանապարհը
Այսուհետ
Մենք չենք լինի այլևս նույնը
Եվ մեր սիրո ամեն մի բառը
Մեկ ուրիշին կասես անվերջ

Այսուհետ
ես կփակեմ ընդմիշտ իմ դուռը
Այսուհետ
Ընկեր դարձրած ինձ մենությունը
Կխարխափեմ ես ինչպես կույրը
Քեզ կփնտրելով անցյալիս մեջ

Էլ երբեք
Չենք քաղի մենք միրգն արգելված
Դրախտից ընդմիշտ վտարված
Ու մեր միջև ունայնություն է
Էլ երբեք
Մենք իրար գրկած չենք դողա
Երջանիկ մեր սիրո վրա
Էլ միևնույն է
Այսուհետ

Les Jours Heureux

À l'heure où le monde bouge
Alors que ton cœur apprend
La misère
Il te faut teindre de rouge
Il te faut peindre de sang
Ta raison
Quand les loups font ta récolte
Ils t'enseignent malgré toi
La colère
Laisse gronder ta révolte
Prends la fronde et quitte donc
Ta maison

Ils renaîtront les jours heureux
Les soleils verts de notre vie
Ils reviendront semer l'oubli
Après le feu
Et refleuriront avec eux
Les fruits pervers de l'espérance
Avant-courrier de l'insouciance
Et des jours heureux

J'ai laissé dormir ma ferme
Et mes outils se rouiller
Dans la grange
Car l'unique grain qui germe
Pousse au sol de mes pensées
En fusion
J'ai le cœur grisé de haine
Mais ne veut pas surtout pas
Être un ange
Tiens prends ma main dans la tienne
Côte à côte on souffrira
Compagnon

Ils renaîtront les jours heureux
Les soleils verts de notre vie
Ils reviendront semer l'oubli
Après le feu
Et refleuriront avec eux
Les fruits pervers de l'espérance
Avant-courrier de l'insouciance
Et des jours heureux

Երջանիկ օրեր

Որքան պտտվի աշխարհը
Այնքան կզգաս դու ավելի
Քո տանջանքը
Վերքերով խոցված քո դարը
Քո ճամփան արյունով լի
ժամն ահեղ
Երբ վրա կտան գայլերը
Ու քո բերքը կավերեն
Ու քո կյանքը
Վեր կաց կապիր քո զենքերը
Ընդվզիր ելիր ի զեն
Թող տուն-տեղ

Թողեցիր քո տունն ու հողը
Մոռացար բահ ու գութան
Քո ամբարը
Քո հոգում ջրի ցողը
Կդառնա ցասման օվկիան
Արյան կանչ
Ու սրտում քո վրեժն ու ոխը
Քեզ տվել են անվեհեր
Այս պայքարը
Մենք ունենք միևնույն ոսոխը
Տուր քո ձեռքը իմ ընկեր
Գնանք առաջ

երջանկության օրեր նորից
Նոր արևներ դեռ կծնվեն
Կգան կրկին կմոռացվեն
Վիշտ ու թախիծ
Ու կծաղկեն կանաչ ծառեր
Կշողշողա արև ու լույս
Ու կավետեն հավատ ու հույս
Երջանիկ օրեր

երջանկության օրեր նորից
Նոր արևներ դեռ կծնվեն
Կգան կրկին կմոռացվեն
Վիշտ ու թախիծ
Ու կծաղկեն կանաչ ծառեր
Կշողշողա արև ու լույս
Ու կավետեն հավատ ու հույս
Երջանիկ օրեր

Mais après vents et tempêtes
Lorsque chantera la paix
Sur la terre
Pesamment comme une bête
Je viendrai soigner mes plaies
Sur tes flancs
Loin du monde en équilibre
Entre la peur et le jeu
De la guerre
Je serai un homme libre
Je serai un homme dieu
Tout-puissant

Երբ կանցնեն հողմ ու մրրիկը
Կինչի խաղաղության
Սիրո երգը
Ես կգամ կրկին քո գիրկը
Որ բուժեմ իմ անձկության
Վերքը խոր
Կհիմնեմ նորից ես տունս
Իմ ձեռքով կհավաքեմ
Ես իմ բերքը
Կգտնեմ ազատությունս
Կկանգեմ Աստղծո դեմ
Ես հզոր

Ils renaîtront les jours heureux
Les soleils verts de notre vie
Ils reviendront semer l'oubli
Après le feu
Et refleuriront avec eux
Les fruits pervers de l'espérance
Avant-courrier de l'insouciance
Et des jours heureux

Երջանկության օրեր նորից
Նոր արևներ դեռ կծնվեն
Կգան կրկին կմոռացվեն
Վիշտ ու թախիծ
Ու կծաղկեն կանաչ ծառեր
Կշողշողա արև ու լույս
Ու կավետեն հավատ ու հույս
Երջանիկ օրեր

1969



Charles Aznavour / Georges Garvarentz

Les Plaisirs démodés

Dans le bruit familier de la boite à la mode
Aux lueurs psychédéliques au curieux décorum
Nous découvrons assis sur des chaises incommodes
Les derniers disques pop, poussés au maximum

C'est là qu'on s'est connu parmi ceux de notre âge
Toi vetue en Indienne et moi en col Mao
Nous revenons depuis comme en pèlerinage
Danser dans la fumée à couper au couteau

Viens découvrons toi et moi les plaisirs démodés
Ton coeur contre mon coeur malgré les rythmes fous
Je veux sentir mon corps par ton corps épousé
Dansons joue contre joue
Dansons joue contre joue

Viens, noyée dans la cohue mais dissociés du bruit
Comme si sur la terre il n'y avait que nous
Glissons les yeux mi-clos jusqu'au bout de la nuit
Dansons joue contre joue
Dansons joue contre joue

Հնօրյա վայելքներ

Մենք մի մութ նկուղում ուր վխտում են զույգերը
Նոր երգեր ենք լսում խելառ ու աղմկոտ
Մեր տակ դղրդոցից ճոճվում են աթոռները
Ու չենք լսում իրար նույնիսկ իրար շատ մոտ

Մենք այստեղ ենք պարել սիրո առաջին պարը
Այստեղ ենք հանդիպել ջահել խենթ ու անսանձ
Ու եկել ենք ուխտի մեր այս հին սիրո վայրը
Պարում եմ ես քեզ հետ ծխի մեջ անթափանց

եկ, եկ հիշենք ես ու դու հնօրյա վայելքներ
Թող ինչեն նորաձև երգերն անմեղդի
Գրկենք իրար ամուր ձուլենք սրտերը մեր
Պարենք մենք շուրթ շրթի
Պարենք մենք շուրթ շրթի

եկ, թեկուզ ժխորի մեջ պարենք լուռ ու արբած
Կարծես զույգը միակ համայն երկրագնդի
Սուզվենք գիշերվա մեջ մնանք մինչ լուսաբաց
Պարենք մենք շուրթ շրթի
Պարենք մենք շուրթ շրթի

Sur la piste envahie c'est un spectacle rare
Les danseurs sont en trance et la musique aidant
Ils semblent sacrifier à des rythmes barbares
Sur les airs d'aujourd'hui souvent vieux de tout temps

L'un à l'autre étrangers bien que dansant ensemble
Les couples se démènent on dirait que pour eux
La musique et l'amour ne font pas corps ensemble
Dans cette obscurité propice aux amoureux

Viens, découvrons toi et moi les plaisirs démodés
Ton coeur contre mon coeur malgré les rythmes fous
Je veux sentir mon corps par ton corps épousé
Dansons joue contre joue
Dansons joue contre joue

Viens noyée dans la cohue mais dissociés du bruit
Comme si sur la terre il n'y avait que nous
Glissons les yeux mi-clos jusqu'au bout de la nuit
Dansons joue contre joue
Dansons joue contre joue

1972

Մենք այս պարադաշտում գտել ենք մեր անկյունը
Ուր ցնորված մարդիկ պարում են սանձարձակ
Ուր լավում է անվերջ նախամարդու դոփյունը
Դարձած նոր օրերի արժեքը բացարձակ

Մեկը մեկին օտար պարում են ողջ գիշերը
Դեմ առ դեմ են սակայն իրար չեն էլ դիպչում
Չեն հանդիպում իրար երգը հոգին ու սերը
Իսկ ես մթնում քեզ հետ պարում եմ անուրջում

եկ, եկ հիշենք ես ու դու հնօրյա վայելքներ
Թող հնչեն նորաձև երգերն անմեղեդի
Գրկենք իրար ամուր ձուլենք սրտերը մեր
Պարենք մենք շուրթ շրթի
Պարենք մենք շուրթ շրթի

եկ, թեկուզ ժխորի մեջ պարենք լուռ ու արբած
Կարծես զույգը միակ համայն երկրագնդի
Սուզվենք գիշերվա մեջ մնանք մինչ լուսաբաց
Պարենք մենք շուրթ շրթի
Պարենք մենք շուրթ շրթի

❤ Je n'ai pas vu le temps passer

Plus je m'enfonce dans ma vie
Plus je ne peux que constater
Qu'au vent léger de mes folies
Je n'ai pas vu le temps passer

Entre les draps de la jeunesse
Quand je dormais à poings fermés
À l'horloge de mes faiblesses
Je n'ai pas vu le temps passer

Je n'ai pas vu le temps courir
Je n'ai pas entendu sonner
Les heures de mon devenir
Quand je fonçais tête baissée
Vers ce qu'était un avenir
Et qui est déjà du passé

Aux mille questions que se pose
Mon esprit souvent perturbé
Seule une réponse s'impose
Je n'ai pas vu le temps passer

À faire le tour de moi-même
Dans un rayon très limité
Dans le miroir de mes "je t'aime"
Je n'ai pas vu le temps passer

Et d'ouverture en ouverture
Au tempo des amours pressées
J'ai dû sauter quelques mesures
Je n'ai pas vu le temps passer

Quand je rêvais les yeux ouverts
En pensant que j'avais le temps
Je n'ai pas entrepris le tiers
Des choses dont je parlais tant
Et j'ai vu s'installer l'hiver
Dans la folie de mes vingt ans

Et puis soudain la cinquantaine
Le demi-siècle consommé
À la table de mes fredaines
Au moment où les jeux sont faits
Que tous mes atouts sont jetés
Je ne peux dire qu'à regret

Je n'ai pas vu le temps passer

1973

Չտեսա կյանքն ինչպես անցավ

Որքան հոսում է ժամանակը
Այնքան տանջում է ինձ մի ցավ
Քամուն տվի անմիտ իմ կյանքը
Չտեսա կյանքս ինչպես անցավ

Ջահելության լավ տարիներս
Վայելքների ծոցում անցան
Քնաջ էին ժամացույցներս
Չտեսա կյանքս ինչպես անցավ

Չտեսա կյանքն ինչպես սահեց
Չլսեցի ժամերն ինչող
Ինչպես փակվեց ճամփան իմ դեմ
Երբ սիրտը իմ առաջ նայեց
Վաղվա օրերը մոտեցող
Վաղուց անցյալ էին արդեն

Ու հարցերի անվերջ շարանը
Հոգուս բերեց միմիայն ցավ
Եվ մեն-միակ իմ պատասխանը
Չտեսա կյանքս ինչպես անցավ

Ո՛ւր են անթիվ «սիրում եմ»-ներս
Վեպս հանկարծ մի էջ դարձավ
Ինձ խաբեցին հայելիներս
Չտեսա կյանքս ինչպես անցավ

Գրվեց միայն իմ նախերգանքը
Երգս ավարտն իր չունեցավ
Խենթ վազքի մեջ չգտա հանգը
Չտեսա կյանքս ինչպես անցավ

Երազելով քուն թե արթուն
Վաղվան թողնելով ամեն բան
Կարծելով կա դեռ ժամանակ
Շուրջս տեսա դատարկություն
Ու չդարձած քսան տարեկան
Ես ծերացա անժամանակ

Բոլորեցի արդեն հիսունը
Ջուր վատնեցի ուղիղ կես դար
Իմ ցնորքներն ու խենթությունը
Ինձ հասցրեցին վերջին արար
Ուր չի սպասվում ինձ ոչ մի խաղ
Ու մնում է ասեմ ավաղ

Չտեսա կյանքս ինչպես անցավ

Entre nous

Entre deux trains, entre deux portes
Entre deux avions qui m'emporte
Entre New York et Singapour
Ma pensée fait comme un détour

Pour me ramener sur les traces
D'un passé que j'aimais tant
D'un bonheur qui semblait pourtant
De chaque jour, de chaque instant

Et je ressens comme une angoisse
Dans ma gorge qui se noue
Car tout est sens dessus dessous
Entre nous

Entre deux bars, entre deux verres
Entre deux filles un peu vulgaires
Entre l'ivresse et le cafard
Ma pensée revient tôt ou tard

Vers ce passé qui fut le nôtre
Dont j'entends toujours la voix
Vers tout ce qui fut toi et moi
Avant que ne meurent nos joies

À présent ton coeur est tout autre
Il cherche à oublier tout
Faisant le vide tout à coup
Entre nous

Entre deux draps, entre deux rêves
Entre deux fumées qui s'élèvent
Entre la nuit, le petit jour
Ma pensée vole vers l'amour

Et fermant les yeux j'imagine
Que le passé vit encore
Je reconstitue le décor
Et prends ta bouche et prends ton corps

Et sur l'humble théâtre en ruine
De mon coeur l'amour rejoue
Tout ce qu'il y eu d'un peu fou
Entre nous

1975

Մեր միջև

Երկու նավի գնացքի միջև
Օվկիանոսի երկնի միջև
Գնամ Նյու Յորք թե Սինգապուր
Մտքերս տանում են ինձ այլուր

Դեպի անցյալն իմ այն օրերսը
Որ պաշտել եմ ես այնքան
Պահերը իմ երջանկության
Որ թվացել են կարճ սակայն

Բայց ինձ խեղդում են տագնապներս
Երբ հիշում եմ մեր ետև
Թողել ենք վեճ հողմ ու անձրև
Մեր միջև

Երկու դատարկ շշի միջև
Երկու տրվող կանանց միջև
Լինեմ հարբած լինեմ թախծոտ
Մտքերս տանում են ինձ քեզ մոտ

Դեպի անցյալը դեպի մերը
Այն ինչ մերն էր իմն ու քո
Լիներ ցերեկ թե երեկո
Երբ կար դեռ խինդը մեր սիրո

Այսօր ավաղ չկա քո սերը
Սիրտդ փակ է իմ առջև
Դատարկություն է մութ ու սև
Մեր միջև

Երկու գրկի մահճի միջև
Երազներիս ծխի միջև
Լինի գիշեր թե առավոտ
Մտքերս թռչում են միշտ քեզ մոտ

Եվ երբ փակում եմ իմ աչքերը
Էլ ոչինչ չկա անհաս
Թվում է ինձ թե դու կգաս
Շուրթ ու մարմինդ ինձ կտաս

Եվ իր փլված բեմում մեր սերը
Վերստին կառնի նոր թև
Ու կլինի խինդ ու արև
Մեր միջև

Noëls d'autrefois

J'ai connu des Noëls à l'écart de la ville
Où l'on partait joyeux,des torches à la main
C'était avant l'avion, avant l'automobile
Et le froid nous mordait par les petits chemins
L'église toute entière illuminée de cierges
Tremblait de tous ses murs pendant minuit chrétien
Car nous venions nombreux prier la sainte vierge
C'était mieux qu'au théâtre et ça ne coûtait rien

Noëls d'autrefois
Vous aviez une âme
Un je-ne-sais-quoi
Noëls d'autrefois

Nous faisions au retour un vrai repas de fête
Mon père cuisinait, j'étais le marmiton
Ma mère pétrissait de la pâte à galette
On embrochait un porc et cinq ou six chapons
Dans la salle où trônait un sapin formidable
Décoré de bougies et de papier d'argent
Pour avoir le menton à hauteur de la table
Des tripotées d'enfants se hissaient sur les bancs

Noëls d'autrefois
Vous aviez une âme
Un je-ne-sais-quoi
Noëls d'autrefois

À présent nous avons des sapins en plastique
La neige est fabriquée par un atomiseur
La bougie a fait place à l'ampoule électrique
La bûche sort tout droit de chez le confiseur
Plus besoin de sortir la messe est retransmise
Par toutes les radios et la télévision
Nous avons Monseigneur en direct de l'église
Et quand on a sommeil on tourne le bouton

Noëls d'autrefois
Vous aviez une âme
Un je-ne-sais-quoi
Noëls d'autrefois

1978

Ծննդյան հին տոներ

Ո՛ւր են մեր անցյալի տոները ծննդյան
Երբ գնում էինք զվարթ ջահերով աղոթքի
Կիսամութ թաղերով փողոցներով անձայն
Քայլելով ձյունածածկ մայթերով քաղաքի
Ու ողջ եկեղեցին մոմերով լուսավոր
Սպասում էր որ գանք ու երգենք Սուրբ Գիշեր
Բոլորս ծնրադրած դիմացն Աստվածամոր
Դա թատրոն էր կարծես Սուրբ Ծննդյան նվեր

Ծննդյան Սուրբ Տոներ
Ինչ թանկ էր ձեր խորհուրդը
Դա հրաշք էր ու սեր
Ծննդյան հին տոներ

Ու գալով հետո տուն սեղան էինք գցում
Մայրս բլիթն էր թխում իսկ ես օգնում նրան
Հայրս ձաշն էր եփում հետո գինին բացում
Եվ հանդերձ ընտանյոք նստում էինք սեղան
Սենյակում կար մի մեծ ու շքեղ տոնածառ
Ու վրան իբրև ձյուն բամբակներ փունջ առ փունջ
Փայլփլուն զարդերով ու մոմերով պայծառ
Ու մենք փոքրերով խաղում էինք նրա շուրջ

Ծննդյան Սուրբ Տոներ
Ինչ թանկ էր ձեր խորհուրդը
Դա հրաշք էր ու սեր
Ծննդյան հին տոներ

Իսկ այսօր սենյակում տոնածառն է թղթե
Մոմերի փոխարեն մենք լամպեր ենք շարում
Թե դրսում ձյուն տեսնեք դա իսկական ձյուն չէ
Ու բլիթը տոնական խանութից ենք բերում
Եվ էլ կարիք չկա գնալ եկեղեցի
Հեռուստացույցն է մեզ մատուցում պատարագ
Քահանան եթերում մեզ գալիս է այցի
Իսկ թե քունդ տանի կանջատես այն արագ

Ծննդյան Սուրբ Տոներ
Ինչ թանկ էր ձեր խորհուրդը
Դա հրաշք էր ու սեր
Ծննդյան հին տոներ

Mon Ami, mon Judas

Il n'est jamais aisé de juger sur la mine
Nous ne choisissons pas, on est choisi par eux
Qui se font une tête d'imbécile heureux
Et nous donnent le change en mettant la sourdine

Toujours là, toujours prêts, disponibles et serviables
Nageant comme un poisson dans la compromission
Un sourire accroché à cet air voulu con
Qui cache adroitement un autre air implacable

Mon ami, mon Judas
Joue le jeu ne te gêne pas
Courtise-moi, fais des courbettes
Jure que tu es mon ami
Dévoué, sincère et honnête
Que c'est à la mort, à la vie
Fais-toi tout humble et tout sourire
Dis-moi que j'ai un charme fou
Que j'ai de la classe et du goût
Et passe la brosse à reluire
Ça ne te coûte pas un sou

Իմ ընկեր, իմ Հուդա

Հեշտ չէ մարդկանց մասին դատել տեսնելով դեմքը
Մենք չենք ընտրում նրանց նրանք են մեզ ընտրում
Նրանց բութ երջանիկ հայացքն է մեզ գերում
Գալիս են սուսուփուս մեկնում մեզ իրենց ձեռքը
Պատրաստ են մատուցել իրենց ծառայությունը
Ինչպես ձուկը ջրում ճարպիկ են ինարամիտ
ժպիտը դեմքներին իբրև թե միամիտ
Այդտեղ է թաքնված իրենց բուն էությունը

Իմ ընկեր, իմ Հուդա
Մի քաշվիր խաղդ խաղա
Ինձ քծնիր շռայլիր բառերդ
Ասա ընկերս ես երդվյալ
Ինձ համար կզոհես օրերդ
Հավատարիմ իմ առաքյալ
Իբր խոնարհ միշտ իմ կողքին ես
Ասա ունեմ անհուն հմայք
Ունեմ որակ ունեմ ճաշակ
Շողոքորթիր որքան կարող ես
Չես մնա ոչ մի պարտքի տակ

Nous facilitant tout, nous évitant les drames
Ils sont pour nous aider prêts à n'importe quoi
Même complaisamment à nous border parfois
S'ils nous trouvent au lit coucher avec leur femme
Prêts à veiller la nuit, prêts à danser la gigue
Pour mieux nous amuser, prêts à se mettre nus
Acceptant s'il le faut le coup de pied au cul
Se baissant gentiment pour pas qu'on se fatigue

Mon ami, mon Judas
Prends le physique de l'emploi
Flatte-moi de mon élégance
Dis-moi que je suis bon et beau
D'une étonnante intelligence
Que je choisi bien mon bordeaux
Mange mon caviar à la louche
Fume mes havanes au kilo
Et tapi derrière mon dos
Pense aux ristournes que tu touches
Et au prix de l'or en lingot

Mon ami, mon Judas
Dans l'ombre joue avec ta proie
Tire adroitement les ficelles
Tu n'es pas bouffon tu es roi
Je ne suis que polichinelle, moi,
Doux rêveur et tête de bois
Cher profiteur et parasite
Lorsque mon temps sera passé
Le citron mille fois pressé
Vends-moi, trahis-moi au plus vite
Et va-t-en compter tes deniers

Mon ami, mon Judas
Fais ton métier, crucifie moi

1986

Մեր կյանքն են հեշտացնում վճարում փրկագինը
Բոլոր մեր մեղքերի գործած կամ չգործած
Նույնիսկ աչք են փակում մեզ տեսնելով պառկած
Իրենց իսկ անկողնում կողքին իրենց իսկ կինը
Որպեսզի պարզևեն մեզ գերագոյն հաճույքը
Պատրաստ են մերկ պարել մեր դեմ մինչ լուսաբաց
Վերջում կարող եք և քացով խփել նրանց
Մի բան էլ ձեզ կօգնեն ցցելով բաց հետույքը

Իմ ընկեր, իմ Հուդա
Քո դերի մեջ միշտ մնա
Դե գովիր հմայիչ իմ տեսքը
Ասա որ լավն եմ ու սիրուն
Գովիր չտեսնված իմ խելքը
Որ ճիշտ եմ իմ գինին ընտրում
Կեր խավիարս իջիր մառանը
Շշերս մեկ-մեկ դատարկիր
Տզրուկի պես մեջքիս կպիր
Մտքում հաշվիր պարգևադրամը
Ու քսակը գրպանդ դիր

Իմ ընկեր, իմ Հուդա
Դու մթնում գործդ արա
Դու արքան ես իսկ ես քո զոհը
Ինձ խաղացրու մատներիդ վրա
Դե շարունակիր քո գրոհը
Ես խամաճիկն եմ քո հիմար
Երբ ավարտես ինձ հետ քո խաղը
Իմ սիրելի պնակալեզ
Երբ մինչև վերջ դու ինձ քամես
Գնա մատնիր ինձ շուտ հենց վաղը
Որ փողերդ հանգիստ հաշվես

Իմ ընկեր, իմ Հուդա
Դե ինձ խաչիր, քո գործն է դա

Charles Aznavour / Georges Garvarentz

Une vie d'amour

Une vie d'amour
Que l'on s'était jurée
Et que le temps a désarticulée
Jour après jour
Blesse mes pensées
Tant de mots d'amour
En nos coeurs étouffés
Dans un sanglot l'espace d'un baiser
Sont restés sourds
À tout, mais n'ont rien changé

Car un au revoir
Ne peut être un adieu
Et fou d'espoir
Je m'en remets à Dieu
Pour te revoir
Et te parler encore
Et te jurer encore

Une vie d'amour
Remplie de rires clairs
Un seul chemin
Déchirant mes enfers
Allant plus loin
Que la nuit
La nuit des nuits

Une vie d'amour
Que l'on s'était jurée
Et que le temps a désarticulée
Jour après jour
Blesse mes pensées
Tant de mots d'amour
Que nos coeurs ont criés
De mots tremblés, de larmes soulignées
Derniers recours
De joies désharmonisées

Des aubes en fleurs
Aux crépuscules gris
Tout va, tout meurt
Mais la flamme survit
Dans la chaleur
D'un immortel été
D'un éternel été

Une vie d'amour
Une vie pour s'aimer
Aveuglément
Jusqu'au souffle dernier
Bon an mal an
Mon amour
T'aimer encore

Et toujours *1981*

Սերը մեր հավետ

Սերը մեր հավետ
Երդվել էինք պահել
Բայց կյանքը մեր սրտերն է բաժանել
Եվ այսուհետ
Չեմ լինի քեզ հետ
Մեր սրտում այնքան
Խոսքեր են խլացել
Մեր շուրթերին մարել ու քարացել
Հավերժ անձայն
Սակայն քեզ չեմ մոռացել

Եկ հեռանալուց
Չասենք մնաս բարով
Ու ես Աստծուց
Կաղերսեմ դարերով
Որ քեզ տեսնեմ
Ու քեզ երգեմ նորից
Ու քեզ երդվեմ նորից

Սերը մեր հավետ
Թվում էր միշտ անմար
Հավերժ մեզ հետ
Թվում էր մահ չկար
Չկար խավար
Մութ գիշեր
Գիշեր գիշեր

Սերը մեր հավետ
Երդվել էինք պահել
Բայց կյանքը մեր սրտերն է բաժանել
Եվ այսուհետ
Չեմ լինի քեզ հետ
Մեր սրտում այնքան
Խոսքեր են աղմկել
Բառեր դողդոջ հանգել են չեն ժայթքել
Ամեն անգամ
Երբ խինդը չի երգել

Վառ այգաբացներ
Ու գորշ մայրամուտներ
Կգան կանցնեն
Բայց սիրո բոցը մեր
Կապրի միշտ վառ
Ինչպես հավերժ ամառ
Ինչպես անմար ամառ

Սերը մեր հավետ
Մի կյանք էր սիրով լի
Ես կուրորեն
Քեզ կսիրեմ էլի
Անհունորեն
Օ՛ իմ սեր
Հավետ հավետ

Առհավետ

La Salle et la Terrasse

Depuis dix ans comme le temps passe
Je fais la salle et la terrasse
Chez Marie-Louise que tu connais
La petite rouquine au teint de lait
Que je rêvais de prendre au piège
Quand j'étais le coq du collège
Dieu qu'il en est passé du temps
Sur moi qui joue toujours perdant
En attendant que je m'y fasse
Je fais la salle et la terrasse
Et je suis aimé des clients

Moi, faire la salle et la terrasse
J'aurai salement fais la grimace
Tu m'aurais dit ça y a dix ans
Quand Marie-Louise me plaisait tant
Elle allait encore à l'école
Et j'lui collais des auréoles
Quand j'la voyais passer de loin
Mais le petit ange a fait ses foins
Maintenant qu'elle règne sur la place
Moi j'fais la salle et la terrasse
Et je n'irai jamais plus loin

Que voulez-vous donc que j'y fasse
On devient bête et le temps passe
Marie-Louise a 45 ans
Et son cocu bien gentiment
Vient de la faire propriétaire
En allant dormir dans la terre
On ne peut guère dormir plus loin
Moi j'ai tellement d'embonpoint
Et j'ai tellement fait de grimaces
Entre la salle et la terrasse
Je suis un con,
ni plus, ni moins

1983

Ներսը և դուրսը

Կորցրել եմ լավ օրերի հույսը
Սպասարկելով ներսը և դուրսը
Ճաշարանում Մարի Լուիզի
Ուր մատուցող եմ տասը տարի
Մեր դպրոցում այդ կարմրահերը
Թիրախն էր իմ թաքուն իմ սերը
Խորոզ էի այն ժամանակ
Հիմա վառեկ եմ խեղճուկրակ
Մինչև մի օր կուղղեմ իմ կուզը
Կսպասարկեմ ներսը և դուրսը
Վայելելով սեր ու հարգանք

Ես սպասարկում եմ ներսն ու դուրսը
Վազում եմ մի սեղանից մյուսը
Մտքովս չէր անցնի երբեք
Երբ Մարի Լուիզն էր սերս երեկ
Մի աղջիկ էր դպրոցական
Ես ծիկրակում էի նրան
Երբ փողոցով անցնում էր նա
Հրեշտակը այդ հրեշ է հիմա
Ամբողջ բեռը գցել իմ ուսը
Հանձնել է ինձ ներսը և դուրսը
Եվ ավելին չեմ ունենա

Դժվար թե էլ բացվի իմ լույսը
Երբ մնացել եմ նույն թերուսը
Իսկ Մարի Լուիզն հազիվ հիսուն
Թաղել է բութ իր ամուսնուն
Վերցրել է տունն ու ճաշարանը
Դարձել է տեր ու տիրականը
Իսկ ես ցմփոր ու անպիտան
Անկարող եմ անել ուրիշ բան
Էլ ինչի հետ կապեմ իմ հույսը
Սպասարկելով ներսը ու դուրսը
Դարձել եմ էշ…
էշ իսկական

Avec l'aimable autorisation des Éditions Raoul Breton, Éditions Musicales Djanik, Editions Si Do Music

Le Feutre taupé
Paroles : Charles Aznavour
Musique : Pierre Roche
© Editions Si Do Music, 1946

Au creux de mon épaule
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1954

On ne sait jamais
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1956

Sa jeunesse
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1956

L'Amour et la Guerre
Paroles : Bernard Dimey
Musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1959

J'en déduis que je t'aime
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1959

Parce que
Paroles : Charles Aznavour
Musique : Gaby Wagenheim
© Editions Djanik, 1959

L'amour c'est comme un jour
Paroles : Yves Stéphane
Musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1962

Les Comédiens
Paroles : Jacques Plante
Musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1962

Qui?
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1964

Et moi dans mon coin
Paroles et musique : Charles Aznavour
Editions Djanik, 1966

Pour essayer de faire une chanson
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1966

Les enfants de la guerre
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Musicales Djanik, 1966

Les Bons Moments
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1967

Le Cabotin
Paroles : Charles Aznavour
Musique : Georges Garvarentz
© Editions Djanik, 1968

Tout s'en va
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1968

Désormais
Paroles : Charles Aznavour
Musique : Georges Garvarentz
© Editions Djanik, 1969

Les Jours heureux
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1969

Les Plaisirs démodés
Paroles : Charles Aznavour
Musique : Georges Garvarentz
© Editions Djanik, 1972

Je n'ai pas vu le temps passer
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1973

Entre nous
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1975

Noël d'autrefois
Paroles : Jacques Plante et Charles Aznavour
Musique : Charles Aznavour
© Édit. Raoul Breton, 1978

Mon Ami, mon Judas
Paroles et musique : Charles Aznavour
© Editions Djanik,1980

Une vie d'amour
Paroles : Charles Aznavour
Musique : Georges Garvarentz
© Editions Djanik, 1981

La Salle et la Terrasse
Paroles : Bernard Dimey
Musique : Charles Aznavour
© Editions Djanik, 1983

Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Les Éditions Raoul Breton, Les Éditions Musicales Djanik և Les Éditions Si Do Music երաժշտական հրատարակչություններին, ինչպես նաև Նիկոլա Ազնավուրին և Պակոմ Դեկանին՝ «Ազնավուր 100» ալբոմի հեղինակային իրավունքները շնորհելու համար:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև «Թեքեյան Կենտրոն» հիմնադրամին աջակցության համար:

Je tiens à remercier de tout coeur Les Éditions Raoul Breton, les Éditions Musicales Djanik, les Editions Si Do Music ainsi qu'à Nicolas Aznavour et Pacôme Descamps pour nous accorder les droits d'auteur pour l'album "Aznavour 100".

Nous remercions également le Fonds du Centre Tekeyan pour son soutien.

I would like to extend my heartfelt thanks to Éditions Raoul Breton, Éditions Musicales Djanik, and Éditions Si Do Music, as well as Nicolas Aznavour and Pacôme Descamps for granting us the copyright permissions for the album "Aznavour 100".

We also thank the Tekeyan Centre Fund for its support.

Գործիքավորում՝ Տիգրան Նանյան	Arrangements: Tigran Nanian
Վոկալ և կիթառ՝ Պերճ Թյուրաբյան	Vocals & Guitars: Berge Turabian
Ծրագրավորում՝ Տիգրան Նանյան	Keyboards & Keyboard programming: Tigran Nanian
Ակուստիկ կիթառ՝ Խաչիկ Թյուրաբյան	Acoustic guitar: Khach Turabian
Ջութակ և թավջութակ՝ Գայանե Մելիքյան	Violin & Cello: Gayané Mélikian
Փողային գործիքներ՝ Ֆրիտզ Վեբեր	Wind instruments: Fritz Webber
Ձայնագրություն՝ Հոմ Ստուդիոզ	Recording: Home Studios
Ձայնադրում և մաստերինգ՝ Տիգրան Նանյան	Mixed & Mastered by Tigran Nanian
Վոկալ՝	Additional vocals by:
Նաիրի Գասպարյան (երգ 1, 9, 18, 22)	Nairi Gasparyan (tracks 1, 9, 18, 22)
Ալվարդ Մայիլյան (երգ 4, 8, 14, 19, 24)	Alvard Mayilyan (tracks 4, 8, 14, 19, 24)
Ձայնագրություն՝ Արման Ավետիսյան	Recorded by Arman Avetissian
Լուսանկարներ՝ Խաչիկ Թյուրաբյան	Photos by Khach Turabian
Գրքույկի ձևավորում՝ «Անտարես», Երևան, ՀՀ	Designed by "Antares", Yerevan, Armenia